Ուկրաինան բազմիցս օգնության խնդրանքով դիմել է Իսրայելին եւ 2022-ից ի վեր ստացել մերժումներ: Նույնիսկ այն դեպքերում, երբ ԱՄՆ-ից օգնություն ստանալու համար ընդամենն անհրաժեշտ էր ստանալ Թել Ավիվի համաձայնությունը, օրինակ, կապված ամերիկյան հին հրթիռների հետ, որոնց կարիքն ունեինք, Իսրայելը թույլ չտվեց:

Կարդացեք՝ էջ 6

Իսկ մենք ինչ պիտի անենք: Մենք չպիտի գնանք ու միայն քվե տանք: Մենք երկրում մթնոլորտն այնպիսին պիտի դարձնենք, որ ուղղակի հնարավոր չլինի իր շարունակվելը: Չթողնենք միայն խեղճ ընտրողի վրա: Մենք պիտի կարողանանք ձեւավորել այդ «ոչ»-ի մթնոլորտը, որ իշխանությունները չկարողանան անօրինական ինչ-որ բան անել:

Կարդացեք՝ էջ 7

Վանաձորի կենտրոնի Թումանյան հրապարակում մի քանի օր եռուզեռ էր: Հատուկ համազգեստով մարդիկ, վերամբարձ մեքենա, մետաղական հսկա կառուցվածք: Ապամոնտաժում էին հին պաստառները: Թեեւ պաստառների համար գովազդատուները վճարում էին համայնքապետարանին՝ քաղաքի բյուջեն շահում էր: Պարզվեց՝ ՔՊ-ի գովազդային պաստառն է:

Կարդացեք՝ էջ 8

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 42 (4177), 19 մարտ, հինգշաբթի, 2026

www.hraparak.am

Իշխանություն-եկեղեցի հակամարտության հրադադարի փուլում երրորդ նախագահ Սերժ Սարգսյանի առաջնորդած «Պատիվ ունեմ» խմբակցությունը հայտարարության նախագիծ է ներկայացրել խորհրդարան՝ առաջարկելով օրենսդիր մարմնին՝ դատապարտող հայտարարություն ընդունել Եկեղեցու եւ հոգեւորականության դեմ տարվող քաղաքականության վերաբերյալ: Մի քանի էջանոց հայտարարության նախագծում մասնավորապես առաջարկում են արձանագրել. «Պետություն-կրոնական կազմակերպություններ հարաբերություններում հիմնարար են չմիջամտելու սկզբունքը, խղճի ու կրոնի ազատության երաշխիքները եւ կրոնական համայնքների ինքնավարության ապահովումը»: Ինչպես նաեւ արձանագրել, որ անթույլատրելի է եկեղեցական ծեսերի իրականացմանը պետական միջամտությունը, այդ թվում՝ Վեհափառի անվան հիշատակումը զեղչելը, հոգեւոր իրավիճակին եւ ներքին կարգապահական որոշումներին վերաբերող վեճերի դատական քննությունը եւ այլն: Տեքստում նշված է նաեւ, որ հայտարարությունը չի հանդիսանում որեւէ անձին ուղղված աջակցություն եւ չի բովանդակում դավանաբանական գնահատականներ: Այն միտված է Սահմանադրության եւ Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունների պահպանմանը, իրավական որոշակիության ապահովմանը, ինչպես նաեւ՝ պետության եւ կրոնական կազմակերպությունների իրավասության սահմանազատման հստակեցմանը: Հայտարարության նախագիծը խորհրդարանում կներկայացնի խմբակցության ղեկավար Հայկ Մամիջանյանը:

«Քաղպայմանագիրը» Երեւանի սրտում՝ Կասկադում, վերջերս կուսակցության գրասենյակ է վարձել եւ պատուհաս դարձել տարածքում ապրող ու գործունեություն իրականացնողների համար: Զրույից վերանորոգած գրասենյակում, պարզվում է՝ կապի խլացուցիչներ են նաեւ տեղադրել եւ հարկ եղած դեպքում միացնում են դրանք ու այդ ընթացքում շենքում եւ մոտակա հատվածներում խլացնում բջջային կապը: Հավանաբար, շարքային կուսակցականները վախենում են, որ իրենց էլ կգաղտնալսեն իրենց հեռախոսների միջոցով: Մենք հայտնել ենք, որ խորհրդարանի իշխանական պատգամավորներից շատերն իրենց աշխատասենյակում նույնպես հատուկ սարքեր են պահում, որոնք թույլ չեն տալիս հեռախոսի միջոցով գաղտնալսում իրականացնել: Զրույցների ժամանակ հեռախոսը դնում են այդ սարքի մեջ եւ հանգիստ շփվում: Թե ումից են այսքան անհանգստանում, եւ ով է մեր երկրում, իշխանությունից եւ պետական կառույցներից բացի, գաղտնալսումներ իրականացնում, ոչ մեկը չգիտի:

Կեղծ ու երեսպաշտ

Մեզ համար այլեւս այս իշխանությունների հետ կապված անակնկալներ չկան, բայց չենք դադարում զարմանալ այն փարիսեցիության, քայլերի հակասականության վրա, որի դրսեւորումներին ամեն օր բախվում ենք: Ընդամենը մի քանի օր առաջ Փաշինյանն ասում էր՝ «Արցախ» բառի արտաբերումն իսկ պատերազմի կոչ է, իսկ երեկ մի դահլիճում էր հավաքել մի խումբ արցախցիների եւ իր նախարարների հետ նստել՝ արցախցիների հանդեպ իրենց հոգատարության եւ ձեռնարկելիք քայլերի մասին էր խոսում: Մարդկանց զրկել են ոչ միայն հայրենի տունուտեղից, այլեւ՝ հայրենիք վերադառնալու հեռանկարից, հիմա խոսում են «Հայաստանում տնավորվելու մասին»: Ընդ որում, չես հասկանում, թե տնավորվել ասելով ինչ նկատի ունեն, երբ թղթի վրա մնացած մի թերհաս ծրագիր են իրականացրել՝ առաջարկելով տներ կառուցել մարզերում, յուրաքանչյուրին 3 կամ 4 միլիոն դրամ առաջարկելով, այն էլ՝ տարիներ անց վերադարձնելու պայմանով: Եվ քանի որ այդ գումարով տներ ձեռք բերելն ուղղակի անհնարին է, ուստի այս 3 տարվա ընթացքում հազիվ 4 հազար ընտանիք է ստացել այդ գումարները՝ Հայաստան գաղթած 120 հազար արցախցիներից: Բայց ամեն հարմար առիթով՝ արցախցիների հարցերը լուծելու անվան տակ այս իշխանությունը եվրոպաներից օգնություն է խնդրում, եւ ոչ ոք չի հետեւում, թե այդ գումարներն ինչի վրա են ծախսվում: Արցախցիների՝ Հայաստան գալու առաջին իսկ օրվանից նրանց հանդեպ ատելություն գեներացնող իշխանությունը, որի անմիջական հրահանգով նրանք չեն կարողանում աշխատանք գտնել Հայաստանում, հիմա խոսում է արցախցիների համար «տուն, աշխատանք, սոցիալական միջավայր» ստեղծելուց, նրանց «մեր քույրեր եւ եղբայրներ» է անվանում: Իսկ նախօրեին 5 երեխա ունեցող արցախցի կնոջ են կալանավորել՝ Փաշինյանի հասցեին Ֆեյսբուքում մեկնաբանություն գրելու համար:

«Ուժեղ Հայաստան» կուսակցության խորհրդի անդամ Նարեկ Կարապետյանը, մեր տեղեկություններով, հարցազրույց է տվել Մարիո Նավալին: Վերջինս ամերիկացի հայտնի կրիպտո ձեռնարկատեր է, գործարար, միեւնույն ժամանակ՝ բլոգեր, IBC Group-ի հիմնադիրը: Նա հայտնի է դարձել X հարթակում համաշխարհային առաջնորդների հետ (օրինակ՝ Իլոն Մասկի, Ալեքսանդր Լուկաշենկոյի եւ այլոց) իր հարցազրույցների շնորհիվ: Հայտնի է նաեւ իր «Կլոր սեղան» նախագծով, որտեղ քննարկում է սուր քաղաքական եւ տնտեսական թեմաներ: Հարցազրույցը կհեռարձակվի առաջիկայում: Հիշեցնենք, որ ամիսներ առաջ էլ Նարեկ Կարապետյանը հարցազրույց էր տվել ամերիկացի լրագրող Թաքեր Կառլսոնին:

Գյուլնազ տատի հեքիաթներին մի հավատացեք

Չնայած ՔՊ-ական «ուրախ ավտոբուսի պասաժիրները», մեկը մյուսին հերթ չտալով, մեկ կենտրոնից իջած հրահանգով մարզային այցերի մասին Գյուլնազ տատի հեքիաթներն են պատմում, թե մարզերում, համայնքներում ժողովուրդն իրենց գրկաբաց ընդունում է, որ ունեն հանրային լայն աջակցություն եւ հունիսի 7-ին ավելի շատ ձայն են ստանալու, քան 2021 թվականին են ստացել, սակայն իրականում ՔՊ-ի ներսում տագնապած են եւ բոլորովին այլ բան են ասում: Մասնավորապես այն, որ այդ այցերն ավելի շատ վկայեցին ժողովրդի՝ իրենց նկատմամբ անտարբերության ու բացասական վերաբերմունքի մասին: Իշխանական վերնախավում քննարկում են՝ էլ ի՞նչ անեն թոշակները բարձրացնելուց, բժշկական ապահովագրություն ներդնելուց հետո, որ իրենց վարկանիշը բարձրացնեն: Մեր աղբյուրի փոխանցմամբ՝ ամենատարբեր քայլերի մասին են քննարկել, ընդհուպ՝ ամեն գնով հասնել հայ-թուրքական սահմանի բացմանը, որով կապացուցեն, որ իսկապես խաղաղություն են բերել:

ՍԿԶԲ

ՌԱԴԻՈ ԿՎԵՐԱԴԱՌՆԱՄ, ԵՐԲ ԱՐՄԵՆ ՔՈԼՈՅԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ ԼԻՆԻ ԱԴԵԿՎԱՏ ՂԵԿԱՎԱՐ

Երեւանի առաջին ատյանի դատարանը (դատավոր՝ Ա. Պետրոսյան) անվավեր է ճանաչել Հանրային ռադիոյի տնօրեն Արմեն Քոլոյանի որոշումը՝ «Ռադիոլուր» ծրագրի ավագ լրագրող Ալիսա Գեւորգյանին խիստ նկատողություն տալու մասին: Այս մասին տեղեկացնում է փաստաբան Կարինե Ղաշանգյանը: Դատարանի գնահատմամբ, այդ որոշման համար իրավական հիմք հանդիսացած որոշումը կորցրել է իր իրավաբանական ուժը դեռեւս 2020 թվից՝ «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքն ուժը կորցրած ճանաչվելու հետեւանքով, ինչպես նաեւ վիճարկվող հրամանում նշված իրավական հիմքը եւ կիրառված կարգապահական տույժը չեն համապատասխանում միմյանց:

Հիշեցնենք, որ Ալիսա Գեւորգյանին խիստ նկատողություն էին հայտարարել Հովհաննես Իշխանյանի գրառմամբ Ֆեյսբուքում կիսվելու համար: Հետո մի անգամ էլ կարգապահական տույժ՝ նկատողություն էր կիրառվել՝ Արամ Աբրահամյանի գրառմամբ կիսվելու համար, որը եւս դատարանի որոշմամբ ճանաչվել է անվավեր:

Ալիսա Գեւորգյանից «Հրապարակը» հետաքրքրվեց՝ արդյո՞ք նա կվերականգնվի իր աշխատանքում՝ Հանրային ռադիոյում: Նա նկատեց. «Ես Ռադիոյից դուրս եմ եկել ինքս՝ նկատողություններից հետո: Նկատողությունները եղել են մեկ տարի առաջ, որոնցից մեկը խիստ նկատողություն էր, մյուսը՝ ուղղակի նկատողություն: Դատարանը դրանք համարել է անվավեր, ես, դիմելով դատարան, նպատակ չեմ ունեցել աշխատանքս այնտեղ շարունակելու, դեռ այն ժամանակ եմ ասել՝ ինչ ուզում եք, արեք: Պարզապես այդ քայլով փորձել եմ իրավիճակն ինչ-որ առումով փոխել, քանի որ Ռադիոյում երբեք նման մթնոլորտ չի եղել, ես ուղիղ 30 տարի այնտեղ եմ աշխատել, եւ ոչ մի անգամ ինձ չեն ասել՝ ինչո՞ւ ես ինչ-որ նյութով կիսվում կամ ինչո՞ւ ես գրառում անում եւ այլն: Ես մշտապես ասել եմ այն, ինչ ցանկացել եմ եւ համարել եմ ճիշտ: Իմ դեմ որեւէ մեկն այդ տարիների ընթացքում նման հանցանք չի կատարել, եւ դատարան դիմելու անհրաժեշտություն երբեք չի եղել: Ի դեպ, ես այն մարդը չեմ, ով կարող է հատել կոռեկտության սահմանը, ընդամենը կոռեկտության սահմաններում գրառումներ եմ կատարել, դատարանը եւս անհիմն է համարել ինձ այդ գրառումների համար նկատողություններ տալը: Ես առանձնապես խուսափում էի դատական երկարատեւ պրոցեսից, ասում էի՝ ինչ ուզում է, թող անի, սակայն իրավաբան ընկերներիցս մեկը ստանձնեց այդ պարտականությունը եւ ասաց, որ ինձնից ընդամենը լիազորագիր է հարկավոր, ու վերջ.... նա է այդ հարցերով զբաղվել, միակ նպատակս Ռադիոյի իմ գործընկերների խոսքի ազատությունը պաշտպանելն է, ինչը մենք ունեցել ենք 30 տարի շարունակ: Արմեն Քոլոյանի ղեկավարած Ռադիոյում ամեն օր, ամեն բառի համար բացատրություն են գրում, եթե անգամ Ռադիոյի կայքէջում մի տառ ես բաց թողել, աշխատակցին ստիպում է իր բանուգործը թողնել եւ բացատրագիր գրել՝ այդ մի տառի համար: Իմ կռիվը ֆեոդալական բարքերի դեմ է եղել, ես ոչ մի այլ ակնկալիք չունեմ: Նա միայն պետք է փաստաբանի գումարը փոխհատուցի, ու վերջ, ես միայն պահանջում եմ, որ նկատողություններն անվավեր ճանաչվեն: Հույս ունեմ, որ այս քայլով կօգնեմ իմ գործընկերներին, որոնց վրա նա ամեն վայրկյան խոսում է մատ թափ տալով:

Իսկ այժմ ինչո՞վ եք զբաղվում, ո՞ր դեպքում կվերադառնաք հարազատ Ռադիո: Մեր զրուցակիցն ասաց. «Աշխատում եմ Արման Թաթոյանի փիառ թիմում: Ռադիո կվերադառնամ միայն մեկ դեպքում, երբ Արմեն Քոլոյանն այնտեղ չի լինի, նրա փոխարեն կլինի ադեկվատ ղեկավար, որի համար խոսքը կլինի արժեք, իսկ լրագրողի մտքի ազատությունը՝ կարեւոր նախապայման: Արմեն Քոլոյանն անդադար ասում էր, որ Հանրային ռադիոյի լրագրողն իրավունք չունի ընդգծված տեսակետներ արտահայտելու, պետք է չեզոք լինի եւ այլն, բայց ես ուզում եմ հիշեցնել Հ1-ի լրագրող Պետրոս Ղազարյանի գործունեության մասին, որը, Հանրային հեռուստաընկերության եթերն օգտագործելով, ամեն օր իր անձնական վերաբերմունքն է արտահայտում, իսկ ես ընդամենը իմ անձնական ֆեյսբուքյան էջում՝ պարկեշտության եւ կոռեկտության սահմաններում կատարել եմ գրառումներ՝ ներկայացնելով քննադատական խոսք, ինչն իմ սահմանադրական իրավունքն է: Սա կողմնակալ վերաբերմունք է՝ մեկին ամեն ինչ կարելի է, մյուսին անգամ չի կարելի իր անձնական էջում գրառում կատարել: Այնպիսի իրավիճակ ստեղծեցին, որ ես հեռանամ Ռադիոյից, որն իմ ընտանիքն է եղել 30 տարի շարունակ: Սիրել եմ Ռադիոն, աշխատել եմ այնտեղ մեծ սիրով: Պատերազմից հետո այն իմ միակ փրկությունն է եղել, վարում էի մի հաղորդում, որի շնորհիվ ուղղակի կարողացա ապրել, այն միտքս անջատելու միակ հնարավորությունն է եղել: Գիշերվա կեսին դեպքեր են եղել, որ Քոլոյանը զանգահարել է իմ ծրագրի ղեկավարին եւ ասել՝ Ալիսան գրառում է արել, բացատրագիր կազմեք: Նման մթնոլորտ էր ստեղծվել, ինչը չէի կարող երկար հանդուրժել: Սիրով ընդունել եմ պարոն Թաթոյանի առաջարկը, այն ինձ օգնեց՝ այս տհաճ իրավիճակը հաղթահարել»:

Իսկ ի՞նչ մթնոլորտ է այժմ Հանրային ռադիոյում, ինչպե՞ս են լրագրողները հանդուրժում Քոլոյանին: «Մարդիկ տարբեր են բոլոր կոնդակներում: Որքանով ես տեղյակ եմ, տնօրենն իր դիրքերը հիմա ամրապնդել է եւ իրեն լավ է զգում, հավանաբար, Փաշինյանի հետ իր կապերն ավելի է ամրացրել: Հանրային ռադիոն նիկոլական քարոզչամիջոցի է վերածվել: Երբեմն հետեւում եմ հաղորդումների հյուրերին՝ զարմանում եմ, որ Ռադիոն երբեք չի եղել այդպիսին: Ես նման Ռադիոյում չեմ աշխատել, մեզ համար լավ հաղորդումը սուր հաղորդումն էր: Հնչեցնում էինք մարդկանց հոգսերի, ցավերի ու խնդիրների մասին եւ դրանից մեզ լավ էինք զգում, քանի որ օգտակար աշխատանք էինք կատարում: Բնական է, որ հանրային լրատվամիջոցում կա ներքին տաբու, եւ առանց դիտողությունների ու կապանքների մենք հասկանում էինք, որ աշխատում ենք մի լրատվամիջոցում, որը չպետք է, օրինակ, բանակին սուր քննադատության ենթարկի, քանի որ մեզ լսում է նաեւ թշնամին, բնականաբար, չէինք հայհոյում եւ այլն, բայց սուր հաղորդում անելը մեզ համար ոչ մի անգամ չի եղել խնդիր: Հիմա այնպիսի իրավիճակ է, որ նախարարին մի սուր հարց տալու համար հայտարարում են, թե սաբոտաժ եք անում իշխանության դեմ: Օրեր առաջ տեսա՝ Արեգ Քոչինյանն էր ելույթ ունենում Ռադիոյով: Նա այն երիտասարդն է, որն առաջարկում է Ադրբեջանին հումանիտար միջանցք տրամադրել, այն Ադրբեջանին, որ ամիսներ շարունակ արցախցիներին պահում էր շրջափակման մեջ, իսկ հետո պատերազմով հայաթափեց Արցախը: Այնպես որ, Ռադիոն վերածվել է Նիկոլ Փաշինյանի հակահայկական քարոզչամեքենայի: Ես ոչ մի անձնական ակնկալիք չունեմ ու չեմ պատրաստվում այդ մարդու հետ աշխատել, սակայն ինձ համար կարեւոր է, որ շուտով 100-ամյակը նշող՝ ինձ անչափ հարազատ Ռադիոն նմանօրինակ ստորացած ու արժեզրկված կերպով չներկայանա հասարակությանը»:

Էջը՝
Հայկ
ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

ԵԹԵ ԱՅԺՄ «ԱՐՑԱԽ» ԲԱՌԸ ԳՐԳՌՈՒՄ Է ԹՇՆԱՄՈՒՆ, ԱՊԱ ԻՆՔԸ 2020-ԻՆ ԱՆԴԱԴԱՐ ԳՐԳՌԵԼ Է

«Հրապարակի» զրուցակիցը կինոռեժիսոր, անիմատոր, պրոդյուսեր **Դավիթ Սահակյանցն** է:

- Ներքաղաքական զարգացումներին, նախընտրական քարոզարշավին հետեւո՞ւմ եք: Իշխանություններն ինչ-որ հակաէսթետիկ եղանակներով ավտոճանապարհներին ուտում-խմում են, ռաբիս ու անճաշակ երգերի տակ պարում, զվարճանում: Ի՞նչ կարծիք ունեք այս ամենի մասին:

- Ըստ իս՝ բոլոր ադեկվատ մարդկանց կարծիքն այս հարցում նույնն է, տեսնելով այդ կադրերը, այդ մարդկանց կեցվածքը՝ մարդիկ բացառապես զարմանք են ապրում, թե ինչպես կարելի է այդքան տհաճ լինել, այդքան տգեղ վարքագիծ ունենալ եւ այդպես սադրել հասարակությանը: Տպավորություն է, թե ձեռք են առնում մարդկանց: Ինչ վերաբերում է այն խոստումներին, ավելի ճիշտ՝ այն ստերին, որ խաղաղություն են բերելու երկրին, այդ հորինվածքին կարծես իրենք էլ են սկսել հավատալ, սակայն ակնհայտ է, որ դա մեր պատկերացրած խաղաղությունը չէ, ուղղակի զարմանալ կարելի է, թե քաղաքական ուժը որքան անլուրջ ու հակաէսթետիկ կարող է լինել, նման պահվածք ցուցաբերելու համար.... տպավորություն է, թե այս մարդիկ նպատակ են դրել հայ հասարակությանը հունից հանել: Այս սրտիկները, կարկանդակներն ու ամեն ինչը ավելի շատ պրովոկացիա են: Որքան մարդիկ շատ են դժգոհում, այնքան շատ են նման քայլերի դիմում, հատկապես, որ օրեցօր դժգոհությունը նրանց հանդեպ աճում է, մարդիկ տեսնում են, որ ոչինչ չի արվում ուղղակի, եւ այն, ինչ խոստացվել էր, պարզվեց՝ մեծ սուտ է:

- Իսկ Նիկոլ Փաշինյանի վերջին շրջանի խոսույթը, որ «Արցախ» եզրույթն ինքնին պատերազմի կոչ է եւ վտանգավոր է, նա անգամ ասաց, որ Արցախի մասին խոսելը նշանակում է երկրում երկու արտաքին քաղաքականություն վարել, ինչը սխալ է եւ սադրիչ: Ի՞նչ կասեք այս մասին:

- Այն հայտարարությունը, որ Արցախի անունն արտաբերելը նշանակում է պատերազմի կոչ, եւս մեկ անգամ փաստում է, որ իր լոգիկայով 44-օրյա պատերազմը եղել է իր սադրանքի արդյունքում, երբ նա բղավեց՝ Արցախը Հայաստան է, եւ վերջ: Եթե այժմ «Արցախ» բառի արտաբերումը գրգռում է թշնամուն, ապա ինքը 2020 թվականին անդադար գրգռել է թշնամուն եւ հենց ինքն է պատասխանատու 5 հազար եւ ավելի զոհերի կյանքի համար: Նորից վերադառնում ենք այն կարծիքին, որ բոլոր աղետների պատճառն այս մարդն է, եւ մեր ունեցած բոլոր մարդկային եւ տարածքային կորուստների պատասխանատուն ու մեղավորը բացառապես ինքն է: Նա պետք է պատասխանատվության ենթարկվի, օրեցօր նոր կարմիր գծեր է հատում: Այս իշխանությունը սեւ փիառը դարձրել է փրկօղակ, որն իրեն թույլ կտա մնալ ջրի երեսին, որպեսզի հավաքեն այն ձայները, որոնք այս ընտրություններին իրենցը չեն լինելու: Նրանք, համենայնդեպս, այդպես են կարծում, բայց մեր հանրությունն այս անգամ պետք է ավելի զգոն լինի եւ գիտակցի, որ եթե սրանք վերարտադրվեն, շարունակական են լինելու այն բոլոր լկտիությունները, որոնց ականատեսն ենք այսօր:

- Ընդդիմադիր ուժերի նախընտրական քարոզարշավի մասին ի՞նչ կասեք, արդյո՞ք նրանց քայլերը, գործողություններն ու հայտարարությունները պրոֆեսիոնալ են: Շատերը նաեւ նրանց են քննադատում:

- Դժվար է ընդդիմության մասին խոսելը: Ես նրանցից շատերի հետ շփումներ ունեմ, անձամբ ճանաչում եմ, սակայն չեմ ցանկանա նրանց այս փուլում քննադատել, քանի որ այն, ըստ իս, սխալ է գոնե այս փուլում: Ցանկացած իրական ընդդիմադիր ուժի, ով ցանկանում է հեռացնել այս իշխանությանը, ես պատրաստ եմ օգնել: Բայց թերությունների մասին չեմ ցանկանա այժմ խոսել:

Մասիսը հեռացվում է բոլոր սիմվոլներից

Նիկոլ Փաշինյանը դեռ տարիներ առաջ սկսեց պայքարել Արարատ սարի դեմ՝ որպես սիմվոլի, եւ առաջ քաշեց Արագածի պաշտամունքը՝ որպես այլընտրանք: Հիմա նա արգելում է «Արցախ» բառն արտասանել, խոսել ցեղասպանության մասին: Այդ ամենը որակում է որպես պատերազմի կոչ եւ սպառնալիք եւ այդ քաղաքականությունը կամաց ներդնում է երկրում: Սկզբում Մասիս սարի պատկերը հանեցին Հայաստան մուտքի կնիքներից, իսկ երեկ մեր աղբյուրը պատմեց, որ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի պաշտոնական լոգոտիպը, որի վրա պատկերված են Մասիս եւ Սիս սարերը, նույնպես հրահանգված է փոխարինել այլ լոգոտիպով, որտեղ Արարատ լեռան փոխարեն այլ պատկեր կլինի: Մեր աղբյուրի խոսքով՝ լոգոտիպի փոփոխության ուղղությամբ սկսել են աշխատել այս այս տարվա հունվարից: Իրենց ասվել է, որ մինչեւ ուսումնական տարվա ավարտը այն պետք է փոխված լինի: Մենք փորձեցինք մեկնաբանություն ստանալ պոլիտեխնիկից, սակայն ոչ բուհի ռեկտոր Գոռ Վարդանյանը, ոչ նրա խոսնակը չպատասխանեցին մեր հեռախոսազանգերին:

Նամակ արեւմտյան տերերին. ինչո՞ւ է ՔՊ-ն «տղա բերում» արեւմուտքից

«Քաղպայմանագիր» կուսակցության վարչության փոխնախագահ, էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանին երեկ հարցրինք՝ ինչո՞ւ են Եվրամիության հիբրիդային արագ արձագանքման խումբ հրավիրել Հայաստան՝ ԱԺ ընտրություններին ընդառաջ, սպառնալիքներին դիմակայելու համար: Հիշեցնենք, որ ԵՄ արտաքին գործերի ու անվտանգության քաղաքականության հարցերով բարձր ներկայացուցիչ Կայա Կալլասն է այս մասին նախօրեին հայտարարել՝ նշելով, որ ԵՄ-ն դրանով ընդառաջել է Հայաստանի խնդրանքին: «Հարեւանության ժողովրդավարական դիմադրողականության աջակցությունը մնում է կարեւոր: Մենք Հայաստանին մենակ չենք թողնի՝ բախվելու արտաքին միջամտության հետ: Ճնշման տակ գտնվող ժողովրդավարությունները կարող են հույսը դնել Եվրոպայի վրա»,- ասել է նա: Արտգործնախարար Արարատ Միրզոյանն է Բրյուսելին նամակով դիմել՝ խնդրելով արագ արձագանքման խումբ ուղարկել Երեւան:

Հիշենք նաեւ, որ անցած դեկտեմբերին Բրյուսելից հայտնել էին, որ պատրաստվում են 12 միլիոն եվրո աջակցություն տրամադրել Երեւանին, որ օգնեն՝ «ընտրություններին ընդառաջ հակահարված տալու ռուսական ապատեղեկատվությանը»: Պապոյանը, սակայն, վերացական մտքեր սկսեց արտաբերել՝ հստակ չմատնանշելով խմբի՝ Հայաստան գալու նպատակը. «Եթե կշեռքի նժարին դրված է Հայաստանի անկախությունը, թե լինել-չլինելու հարցը, Հայաստանում կլինի պատերազմ, թե՞ խաղաղություն, Հայաստանը կլինի կիսանկախ վասա՞լ, ֆորպո՞ստ, թե՞ նորմալ պետություն, ՀՀ քաղաքացիները Հայաստանո՞ւմ կապրեն, կարարեն, թե՞ կգնան՝ ուրիշ երկրների ուրիշ տարածքներում ուրիշ երկրների համար պատերազմական գործողությունների կմասնակցեն, այդ պարագայում, կարծում եմ, այդ նամակը ոչ միայն տրամաբանական է, այլեւ՝ պարտադիր»:

Խնդրեցինք ավելի կոնկրետ խոսել՝ ինչի՞ց ելնելով է ասում, որ մեր անկախությունը վտանգված է, պատերազմ է սպառնում մեզ եւ այլն, բայց Պապոյանն էլ ավելի ցաքուցրիվ պատասխաններ արտաբերեց. «Ձեր նշած հարցը՝ եթե 1044 թվականի լրագրող լիներ, կարային տային, ասենք, բյուզանդական էմիսարներին, որոնք... կամ 424 թվականին կարային տային սասանյան էմիսարներին, որոնք էս նույն գործով էին զբաղված»: Այդուհանդերձ, կասմ՞ք, թե ով է վտանգում ՀՀ անկախությունը, որ ԵՄ արագ արձագանքման խմբեր եք հրավիրել Հայաստան: «Բոլոր այն ուժերը, որոնք օտարերկրյա հպատակ են, իրենց շահերի կենտրոնը Հայաստանի Հանրապետությունը չէ, ՀՀ քաղաքացիները չեն, կամ իրենք ՀՀ քաղաքացի չեն, կամ իրենց երեխաները ՀՀ-ում չեն ծնվել եւ այլն: Մենակ կան այլ պետությունների լրտեսներ եւ ծառայում են օտարների շահերին, այդ դեպքում ինչո՞ւ պետությունն իրավական գործընթաց սկսելու փոխարեն դրսից մարդ է բերում՝ ի դեմս արագ արձագանքման խմբի: «Գոյություն ունի իրավական, քաղաքական, բարոյական գնահատական, ես քաղաքական գնահատականներ եմ տալիս: Այո, իրավական պետություն ենք, իրավապահ համակարգն էլ ուշադիր է եւ կանխարգելիչ գործողություններով, նաեւ քաղաքական գործողությունների արդյունքում կգանք նրան, որ օտարերկրյա ուժերին ծառայողները կստանան իրենց արժանի տեղը հունիսի 7-ի ընտրությունների արդյունքում»:

Ապա Պապոյանը վստահեցրեց, որ դրսից «տղա բերելով» չեն սպառնում ընդդիմադիրներին: «Մեզ ո՞չ էմիսարներ են պետք, ո՞չ էլ... մենք գիտենք, թե ումից ենք քվե խնդրելու: 21 թվականին տեսել եք՝ ինչ արդյունքներ ենք... ագարակցուց ենք խնդրելու, մեղրեցուց, եւ այսպես շարունակ»,- ասաց նա՝ եզրափակելով. «ԵՄ գործընկերներն այստեղ են, որպեսզի մեր անկախությանը, ինքնիշխանությանը եւ ապագայում մեր խաղաղությանը վնասող ու խաթարող որեւէ գործողություն չհասնի հաջողության»:

Նկատենք, որ, ըստ լուրերի, Արեւմուտքը Հայաստանում փորձելու է կիրառել մոլդովական սցենարը եւ ընդդիմադիր մրցակից ուժերին դուրս թողնել ընտրապայքարից, սակայն անգամ ՔՊ մեր աղբյուրներն են խոստովանում, որ դժվար թե նման ռիսկային քայլի գնան՝ հասկանալով դրա առավել վտանգավոր հետեւանքները, ուստի Արեւմուտքի տերերով ընդամենը փորձում են ընդդիմադիրների վախը բռնել:



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

254 ՏՂԱՆ ՀԵ՞Ղ, ՈՐ ՄԵՐ ՍՈՒՎԵՐԵՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԶՈՀ ԳՆԱՑԻՆ՝ ՎԱՐԴԵՆԻՍ, ՋԵՐՄՈՒԿ...

«Հրապարակի» զրուցակիցը 2022-ի սեպտեմբերյան մարտերի ժամանակ զոհված Սերյոժա Ղազարյանի հայրն է՝ **Սերժ Ղազարյանը**:

- Իշխանությունները որդեգրել են մի քաղաքական գիծ, համաձայն որի՝ արգելված է խոսել Արցախի մասին, արգելված է խոսել Հայոց ցեղասպանության մասին, արգելված է Արցախի պատմության մասին գրքեր կարդալ, արգելված է Մասիս սարն անվանել հայկական, եւ այսպես շարունակ: Վաղը գուցե ադրբեջանցիներին եղբայրաբար չընդունելու համար մարդկանց բանտարկեն, եթե հունիսի 7-ին ՔՊ-ն վերընտրվի: Ըստ էության, Նիկոլ Փաշինյանի վարած քաղաքականությունը դրա մասին է: Դուք ի՞նչ կարծիք ունեք այս ամենի մասին:

- Ես Նիկոլ Փաշինյանին չեմ համարում երկրի ղեկավար, ու, առհասարակ, Հայաստանն անտերության մատնված երկիր է, որը ոչ մի կառավարիչ չունի՝ թողնված է բախտի քմահաճույքին: Ընտրարշավների, նախկին քարոզարշավների ժամանակ նա մեր ժողովրդին լրիվ այլ բան էր խոստանում, հիմա այլ բան է խոստանում, նա այդ աթոռին տիրացավ ստի միջոցով: Անցան տարիներ, նա իր ոչ մի խոստումը չկատարեց, դրան էլ գումարած՝ հանձնեց Արցախն ու հայկական դիրքերը: Ինչից խոսում ես, ասում են՝ ասֆալտ, բայց մի՞թե մեր ազգային արժանապատվությունը, մեր թասիբը, մեր տղերքի արյունը կարելի է համեմատել ասֆալտի հետ: Ես դեմ չեմ, թող իրենց զավակների կյանքը համեմատեն ասֆալտի հետ, բայց իմ երեխայի կյանքը թույլ չեմ տալիս.... էդ ինչ հեծանիվ են հայտնաբերել, ասֆալտ, հա ասֆալտ, զզվեցինք արդեն, էլի: Քանդված փողոցը բա պիտի ասֆալտ անեք, բա ինչ պետք է անեք, հերիք եղավ, էլի, աչքներիս թոզ փչեք, վերցրեք ձեր ասֆալտն ու հեռացեք, մեզ ո՛չ դուք եք պետք, ո՛չ էլ ձեր անտեր ասֆալտը: Երկիրը՝ տնտեսական կորուստների մեջ, աղքատությունը՝ շատ, մարդիկ սոված են, սրանք սաղ օրը՝ ասֆալտ ենք անում, հա՝ ասֆալտ ենք անում, ասֆալտով հարց լուծվո՞ւմ է: 8 տարի շարունակ Հայաստանի վարչապետն ինքն է, եթե Արցախը մերը չէր, ինչո՞ւ էր ուղարկում մեր երեխեքին պատերազմ, դե թող միանգամից ասեր՝ Արցախը մերը չի, Ադրբեջանին ենք տալու, ժողովուրդն էլ էդ ժամանակ արդեն գիտեր՝ ինչ կաներ ու ոնց կաներ, ինչի՞ համար մսաղացը գցեց մեր տղերքին: 90-ականներից սկսած, պայքարում ենք Արցախի համար, հետո քառօրյա պատերազմը տեղի ունեցավ, էլի դիմադրեցին մեր տղերքը, 44-օրյան տեղի ունեցավ, բոլորն այդ մասին են միայն խոսում, բայց պետք է նաեւ ամեն հարմար առիթով հիշեցնենք, որ 2022 թվականի սեպտեմբերին թուրքը մտել է մեր տների մեջ, մեր երեխեքին սպանել ա: Այո, մեր տան մեջ, մեր սուվերեն տարածքը մեր տունն ա: Մարդ չի՞ զոհվել սեպտեմբերյան մարտերի ժամանակ, հա՞, 254 տղան հե՞չ, որ մեր սուվերեն տարածքում զոհ գնացին: Վարդենիս, Ջերմուկ, Վերին Շորժա եւ այլն:

- Ի դեպ, Արման Թաթոյանը վերջերս հայտարարեց, որ ադրբեջանցիները Ջերմուկի եւ Գեղարքունիքի ուղղությամբ առաջ են եկել:

- Ես գիտեմ ամեն բան: Իմ տղան կոնկրետ մեր դիրքերում է զոհվել, մեր տարածքի մեջ, դա ի՞նչ է նշանակում՝ եկել են մեր տարածքի մեջ, իմ երեխային սպանել են, ո՞վ պետք է դրա համար պատասխան տա, լավ, ինչքա՞ն կարելի է այսպես անտարբերության մատնել, եղավ, անցավ, ու վե՞րջ, հա՞, էդպես հեշտ մոռացա՞ն:

- Ինչո՞ւ է Նիկոլ Փաշինյանն այդքան շատ վախենում Իլհամ Ալիեւից:

- Մի շիզոֆրենիկը՝ սա, մի շիզոֆրենիկը՝ Ալիեւը, ուղղակի սա էնքան ապուշ ա, որ դիվանագիտությունից ընդհանրապես տեղյակ չի: Ալիեւն ասում է, որ ամեն ինչ իրենցն է, սա ոչ մի խոսք չի ասում ու դեռ մի բան էլ խոսում է խաղաղության մասին, էլ չենք խոսում այն տարածքների մասին, որոնք նույն Ադրբեջանը գրավել է: Ո՞վ է վերադարձնելու դրանք: 100 տարին մեկ նույն բանն է տեղի ունենում, մարդիկ անգրագետ չեն, լավ հասկանում են, թե ինչ է տեղի ունենում: Ուղղակի ուզում եմ մի բան հասկանալ՝ ինչո՞վ է զբաղված ԱԱԾ-ն: Հիշո՞ւմ եք՝ տարիներ առաջ Գյումրիում մտան, մի ամբողջ ընտանիքի սպանեցին, եթե այսպես շարունակվեց, նման դեպքեր էլի են լինելու, որովհետեւ թուրքերը շատ հեշտ մտնում են Հայաստան, կարող են մտնել ցանկացած տուն, երկիրը ո՛չ տեր ունի, ո՛չ ԱԱԾ:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՊՆ ԲՅՈՒՋԵՆ ԾԱԽՍՈՒՄ ԵՆ ԱՆԽՆԱ ՈՒ ԱՆՀԱՇԻՎ՝ ԱՆՏԱԿ ՏԱԿԱՌԻ ՆՄԱՆ

ԲԱՆԱԿ

ՊՊ-ական կառավարությունը, ինչպես հայտնի է, արդեն երկար տարիներ անվտանգության նոր հայեցակարգ է մշակում՝ Ազգային պաշտպանական ռազմավարություն, սակայն այս աշխատանքը ոչ մի կերպ չի ավարտվում: Ռազմավարությունը մշակող մարմին էին ստեղծել՝ միջգերատեսչական հանձնաժողով, որը ղեկավարում է Անվտանգության

խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը: Նոր անվտանգային կոնցեպտը, որը ենթադրում էր արտաքին հարաբերությունների դիվերսիֆիկացիա, պաշտպանական քաղաքականության հարմարեցում նոր սպառնալիքներին, այլ բարեփոխումներ, պետք է մինչեւ 2025 թվականի վերջը պատրաստ լիներ: Ա՛յս ժամկետն էր նախանշել նիկոլական կառավարությունը՝ իր ամերիկյան եւ բրիտանական գործընկերների հետ համատեղ: Բայց մինչ օրս հայեցակարգը չկա:

«Հրապարակի» լավատեղյակ աղբյուրը բարեփոխումների համակարգման համար պատասխանատուների անուններ է նշում՝ ԶՈՒ ԳՇ պետի օգնական Ասրյան, որը Պապիկյանին մոտ մարդկանցից է, գնդապետ, ԳՇ պետի նախկին օգնական Ժիրայր Ամիրխանյան:

Խոսակցություններ կան, որ վերջինս կարող էր իդեալական գլուխ բերել այդ աշխատանքը, սակայն ինչ-ինչ պատճառներով ազատվեց աշխատանքից՝ անցնելով Պապիկյանի անձնական «շտատ»: ԳՇ պետի օգնականի պաշտոնից Ժիրայր Ամիրխանյանի ազատման հետ կապված՝ տարբեր, հակադիր վարկածներ են պտտվում: Ըստ որոշ աղբյուրների, նա հավակնել է ստանալ ռազմավարական պլանավորման վարչության պետի կամ համալսարանի պետի պաշտոնները, բայց չի ստացել եւ դիմում է գրել: Սուրեն Պապիկյանը, ըստ ՊՆ-ում տարածված կարծիքների, հակված չէ խելացի, արժեքավոր ու հավակնոտ կադրերին բարձր պաշտոնների նշանակել եւ այդ պաշտոնների համար այլ, ավելի հարմար ու «հին» թեկնածուներ է գտել: Բայց քանի որ գնդապետ Ամիրխանյանը լավ կապեր ունի ամերիկյան կառավարական ու զինվորական շրջանակներում, նախարարը նրան թողել է իր մոտ՝ անձնական խորհրդականի կարգավիճակում: Ամերիկացիների կարծիքը Սուրեն Պապիկյանի համար շատ կարեւոր է:

Գնդապետ Ամիրխանյանն ԱՄՆ-ում կապեր է ձեռք բերել այնտեղ ուսանելու ժամանակաշրջանում: Նա իրոք արժեքավոր կադր է, նույնիսկ չափից դուրս արժեքավոր, քանի որ պետությունը նրա ուսուցման, վերապատրաստման վրա ահռելի գումարներ է ներդրել: ԱՄՆ-ում դոկտորանտուրա է ավարտել, որի արժեքը 250 հազար դոլար է: «Հրապարակի» տրամադրության տակ է հայտնվել մի քանի փաստաթուղթ, որոնք վկայում են, որ Պապիկյանի խորհրդականը դեռ ԳՇ պետի օգնական եղած ժամանակ, պետության հաշվին, հաճախ տարատեսակ թանկարժեք գործուղումների է մեկնել, ընդ որում, ոչ թե միայնակ, այլ՝ հարազատների ուղեկցությամբ: Իր դստեր՝ Մանանայի հետ նա 2022 թվականի ապրիլին մեկնել է ԱՄՆ Մոնտերեյ: Նույն թվականին, կրկին պետության հաշվին, Մոնտերեյ է թռչել Ամիրխանյանի կինը՝ Մոնիկան: 2025 թվականին կրկին նրա դուստրն է ԱՄՆ մեկնել, իսկ 2025 թվականին Ժիրայր Ամիրխանյանը դստեր եւ կնոջ հետ մեկնել է Հնդկաստան՝ ուսուցման, որը նույնպես պետության հաշվին է եղել: 2025 թվականի փետրվարին էլ պատվիրակության կազմում մեկնել է Հունաստան: Այստեղ մնացել է 5 աստղանի հյուրանոցում, որտեղ մեկ օրվա կեցության արժեքը 600 դոլար է: Ըստ տարածված խոսակցությունների, պետության հաշվին շրջագայությունները, ի վերջո, Ամիրխանյանի ազատման պատճառ են դարձել:

Թե որքանով է արդարացի այս տեսակետը՝ դժվար է ասել: Ավելի կարեւոր է այն փաստը, որ գնդապետ Ամիրխանյանը թանկարժեք վերապատրաստումներ է անցել ԱՄՆ-ում՝ Կանզասում եւ Մոնտերեյում: Եվ այս ամենից՝ կրթվելուց, «արժեքավոր կադր» դառնալուց, պետությունը նրա պատրաստման վրա ահռելի գումարներ ծախսելուց հետո նրան ազատել է աշխատանքից, կամ էլ ինքն է ազատվել, ինչը, մեծ հաշվով, ոչինչ չի փոխում: Պետական գումարները, փաստորեն, փոշիացվել են:

Իհարկե, չենք ուզում կենտրոնանալ Ժիրայր Ամիրխանյանի անձի վրա: Ի վերջո, նա իրոք ՊՆ ամենափորձառու, հազվագյուտ մասնագետներից է: Բայց եթե հաշվի առնենք, որ Ժիրայր Ամիրխանյանի նման տասնյակ պաշտոնյաներ կան պաշտպանության նախարարությունում, պաշտպանական քաղաքականության վարչությունում, որոնք ամբողջ կյանքում գործուղումների վրա նստած են, ապա կարելի է պատկերացնել, թե ինչպիսի անտակ տակառ է ՊՆ բյուջեն, ինչ շռայլությամբ են այն օգտագործում:

Սուրեն Պապիկյանի անձնական խորհրդական, գնդապետ Ժիրայր Ամիրխանյանին խնդրեցինք մեկնաբանել մեր ստացած տեղեկությունները: Նա խոստացավ պատասխանել մեզ գրավոր: Իսկ մեկ օր անց խոստացավ, որ «կուսումնասիրի եւ տեղյակ կպահի», բայց դեռ չի ուսումնասիրել: Գնդապետի մեկնաբանությունը ստանալուն պես կհրապարակենք:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

ՎՃՌԱԲԵԿԸ 1 ՏԱՐԻ Է՝ ՕԴԻՑ ԿԱԽԵԼ Է ՔՊ-ԱԿԱՆՆԵՐԻՆ ՍԵՐՏԱՃԱԾ ԱՌՈՒՇ ԱՌՈՒՇԱՆՅԱՆԻ ՀԱՐՑԸ

Գորիսի քաղաքապետ Առուշ Առուշանյանի պատիժն ազատազրկմամբ փոխարինելու որոշման դեմ բողոքը Վերաքննիչ դատարանը մասնակի բավարարել էր եւ նրա նկատմամբ ընտրված 1 տարի 8 ամիս ժամկետով ազատազրկումը փոխարինել 1 տարի 11 ամսով ազատազրկմամբ: Վերաքննիչի որոշումը Վճռաբեկ դատարան էր բողոքարկվել ուղիղ մեկ տարի առաջ՝ թե՛ պաշտպանի, թե՛ դատախազության կողմից: Այն վարույթ է ընդունվել եւ քննվելու է գրավոր ընթացակարգով:

Մինչ Վճռաբեկ դատարանը 12 ամիս է՝ քննում է մի պարզ հարց՝ ազատության մեջ թողնե՞լ Առուշանյանին, բա՞նտ ուղարկել, թե՞ գործը զրոյից ուղարկել քննության, Գորիսի երբեմնի ընդդիմադիր քաղաքապետն ամեն ՔՊ-ական տեսնելիս վազում է ընդառաջ՝ բարեւելու, իր աջակցությունը հայտնելու: Անցած հանգստյան օրերին, երբ ՔՊ-ն «ներկուսակցական քարոզարշավի» շրջանակում Սյունիքում էր, Առուշանյանը, հպատակի ժպիտը դեմքին, մոտեցավ Նիկոլ Փաշինյանին, ջերմ բարեւեց ու նրա հետ շրջեց, ինչից հետո, հաջորդ օրը նրա տեղակալ Իրինա Յոլյանը հրաժարական տվեց պաշտոնից: Սրանից առաջ էլ Առուշանյանն արդեն մոտ մեկ տարի ՔՊ-ին աջակցող քայլեր էր անում, հայտնվում նրանց խնջույքներին, դիմավորում Փաշինյանին: Սակայն վճռաբեկի՝ ի նպաստ Առուշանյանի որոշումն էլ չի կայացվում, իշխանությունն այդ սուրը կախած է պահում նրա գլխավերեւում:

Գորիսի քաղաքապետի պաշտպան **Սերգեյ Մարաբյանից** «Հրապարակ»-ը հետաքրքրվեց՝ գրավոր քննությունը շարունակվո՞ւմ է վճռաբեկում: Ասաց, թե որեւէ տեղեկություն չունի բողոքից. «Գրավոր քննության առանձնահատկությունն այն է, որ երբ Վճռաբեկ դատարանը հրապարակման հետ կապված որոշում է կայացնում, ինքը նախապես ծանուցում է մեզ, որ լինելու է հրապարակում, ես դեռեւս ծանուցում չեմ ստացել: Ժամկետի առումով, իհարկե, խնդիր կա, բայց նաեւ հասկանում ենք՝ դատարանը բավականին ծանրաբեռնված է, եթե հիմա Վճռաբեկ դատարանի պաշտոնական կայքը նայեք, որտեղ հրապարակվում են որոշումները, կտեսնեք, որ գործերի մեծամասնությունը 2-3 տարի առաջ վարույթ ընդունված գործերն են, որովհետեւ ահռելի մեծ քանակ կա վճռաբեկում»:

- Գործ ունեն քաղաքական գործչի, համայնքապետի հետ, ինչո՞ւ չի լուծվում այս հարցը, աղմկոտ մյուս գործերով տեսնում ենք՝ վճռաբեկը լավ էլ արագ աշխատում է:

- Ճիշտն ասած, եկեք՝ գնահատական չտամ: Բավականին բարդ իրավական հարց է, հին օրենք-նոր օրենք, հետադարձ ուժ տալու խնդիրներ կան, դատարանի պատշաճ լինելու խնդիր կար, սա պետք է հակակոռուպցիոն դատարանը քննե՞ր, թե՞ ընդհանուր իրավասության քրեական դատարանը, հարցերի շերտերն էլ են շատ, որ բարձրացվել են մեր կողմից: Ես չեմ կարող Վճռաբեկ դատարանի անունից պատասխանել, գիտեմ, որ բավականին ծանրաբեռնված են, եւ դա է հիմնական պատճառը, որը տեսնում ենք հաճախ՝ ուշացումներ: Մեզ էլ էր պետք, որ շատ արագ ավարտվեր, փակվեր հարցը, նաեւ դատախազության բողոքն է վարույթ ընդունվել, ինձ համար կարեւոր է հասկանալ՝ դատախազի բողոքն ինչի՞ համար է ընդունվել վարույթ, ոնց որ թե նրանց պահանջները բավարարվել են վերաքննիչի կողմից:

- Դատախազությունն ի՞նչ է ուզում վճռաբեկից:

- Չեմ կարող ասել, դատախազությունում պրակտիկա կա՝ «անիմաստ» բողոքներ են տանում, միշտ ասում էին՝ հակակշիռ բողոք տարեք, գործերի մեծամասնությունը նույն տրամաբանության մեջ է:

ՀԳ. *Հիշեցնենք, որ Սյունիքի մարզի դատարանը՝ դատավոր Գնել Գասպարյանի նախագահությամբ, 2022թ. մարտի 28-ին հրապարակել է Առուշ Առուշանյանի եւ մյուսների գործով վճիռը, որով Առուշանյանն արդարացվել է իրեն մեղսագրվող ընտրական հանցագործության դրվագով, իսկ մյուս դրվագով՝ պաշտոնեական չարաշահման համար, մեղավոր է ճանաչվել եւ դատապարտվել ազատազրկման՝ 1 տարի 6 ամիս ժամկետով: Դատարանը վերջնական պատիժ է սահմանել 6 ամսով ազատազրկումը, որը պայմանականորեն չի կիրառվել: Նաեւ կիրառվել են տուգանք եւ 5 տարի ժամկետով ՏԻՄ ղեկավար պաշտոն զբաղեցնելու սահմանափակում: Երբ դատական ակտը մտել է օրինական ուժի մեջ, պրոբացիայի ծառայությունը դիմել է Գորիսի ավագանուն՝ Առուշանյանի լիազորությունները դադարեցնելու հարցով, սակայն ավագանին մերժել է միջնորդությունը, որից հետո ԱՆ պրոբացիայի ծառայության մարզային մարմինն Առուշանյանի կողմից պատժից խուսափելու մասին արձանագրություն է կազմել եւ միջնորդություն է ներկայացրել Սյունիքի դատարան՝ պետական պաշտոն զբաղեցնելու սահմանափակումն ու պայմանական ազատազրկումն իրական ազատազրկմամբ փոխարինելու համար: Առուշ Առուշանյանը վիճարկել է ՊԾ գործողությունները, դատարանը մերժել է բողոքը: Սյունիքի դատավոր Վարսենիկ Մելքոնյանն Առուշանյանին ՏԻՄ ղեկավար պաշտոն զբաղեցնելու իրավունքից 5 տարի ժամկետով զրկելը փոխարինել է 1 տարի 8 ամիս 3 օրվա ազատազրկմամբ: Հիմա այս հարցն է քննարկվում վճռաբեկում:*

Աննա ՊԱՊԻԿՅԱՆ

ԵՄ

ԱՄԵՆԱԿԱՐԵՎՈՐ ՀԱՐՑԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ ՉԿԱ

Ընդդիմադիր ուժերն ունեն բոլոր կամ գրեթե բոլոր այն հարցերի պատասխանը, թե ինչ են անելու իշխանության գալու դեպքում, ինչպես են կառավարելու երկիրը, քանի նոր աշխատատեղ են ստեղծելու, ինչպիսի անվտանգության մոդել են կառուցելու, ինչպիսի ներդրումային միջավայր են ձեւավորելու, հանցավորությունն ինչպես են կրճատելու, ինչպես են հասնելու համազգային հաշտեցման եւ համընդհանուր թշնամանքի վերացմանը: Բայց նրանք չունեն ամենակարեւոր հարցի պատասխանը՝ իսկ ինչպե՞ս են գալու իշխանության, ինչպե՞ս են վերցնելու իշխանությունը: Բոլոր այդ ծրագրերը եւ խոստումները հնարավոր է իրականացնել միայն իշխանություն ունենալու դեպքում:

Թվում է, այս հարցի պատասխանը շատ պարզ է. իշխանության գալու մեխանիզմը ընտրություններն են. իրենք հասարակությանը նախընտրական խոստումներ են տալիս, հասարակությունը վստահում է իրենց խոստումներին, հունիսի 7-ին գնում են ընտրատեղամասեր, քվեարկում են ընդդիմության օգտին, հաղթում են ընտրություններում եւ դրանց արդյունքում միայնակ կամ կոալիցիայի միջոցով ձեւավորում են իշխանություն: Բայց իշխանությունը մի քանի օրինակով՝ Վանաձորի, Ալավերդու, Երեւանի, Գյումրու, Փարաքարի ավագանու ընտրություններ, ցույց է տվել, որ մտադիր չէ հաշվի նստել ընտրության արդյունքների հետ, որ իրենք ամեն ինչ անելու են այդ ընտրության արդյունքները չեղարկելու կամ դրանք իրենց հարմարեցնելու համար: Ճիշտ է՝ գործող ռեժիմը չի վայելում սեփական հասարակության վստահությունը, բայց դրա փոխարեն ունի աշխարհաքաղաքական կենտրոնների անվերապահ աջակցությունը: Մեր աչքի առաջ տեղի է ունենում աշխարհի նոր վերաբաժանում, երբ աշխարհի ուժեղները կամ իրենց առնվազն այդպիսին համարողները պայքարում են ամեն մի երկրի, ամեն մի երկրում իրենց դրածո իշխանությունն ունենալու կամ այդպիսիներին պաշտպանելու համար: Ինչո՞ւ պետք է իրենք թույլ տան, որ կորցնեն դրածո իշխանությունը, դրանով՝ վերահսկողությունը երկրի նկատմամբ: Իսկ որ Փաշինյանը եւ նրա իշխանությունը Հայաստանում դրածո են, սրա հետ կարծես թե ոչ ոք չի վիճում, դա չեն վիճարկում: Իշխանության տերերն էլ առանձնապես չեն սեթեւեթում, թաքցնում այդ իշխանության պատկանելությունը:

Նախորդ օրը ԵՄ արտաքին հարաբերությունների եւ անվտանգության հանձնակատար Կայա Կալլասը հայտարարեց, որ Հայաստանի իշխանության խնդրանքով, հիբրիդային հարձակումներին հակազդելու համար, իրենք Հայաստան կուղարկեն արագ արձագանքման խումբ, որ ճնշման տակ գտնվող ժողովրդավարությունները կարող են հույս դնել Եվրոպայի վրա: Կալլասը չի մանրամասնում, թե, օրինակ, ինչով է զբաղվելու այդ խումբը Հայաստանում, ինչով է օգնելու Փաշինյանի իշխանությանը հակազդելու հիբրիդային հարձակումներին, ինչպես է օգնելու՝ պահել իշխանությունը: Իսկ գուցե այդ խումբը վաղուց է Հայաստանում, գուցե դեռեւս 2022 թվականին՝ իբրեւ հայ-ադրբեջանական սահմանին դիտորդական առաքելություն իրականացնելու համար Հայաստան եկած եւ այդպես էլ իրենց երկրներ չվերադարձածները հենց դրանով էլ զբաղվում են, զբաղվում են Փաշինյանի իշխանության պաշտպանությամբ: Իսկ ի՞նչ են անելու նրանք ընտրությունների ժամանակ, ինչպե՞ս են դիմակայելու հիբրիդային հարձակումներին, արդյո՞ք ընդդիմությանը հռչակելու են ռուսական գործակալներ եւ մասնակցելու են հանրահավաքները ցրելուն, ցուցարարներին կալանավորելուն, թե՞ որպես դիպուկահար՝ գնդակահարելու են հիբրիդային հարձակման մասնակից խաղաղ ցուցարարներին: Չէ՞ որ այդ դիտորդներն իբր նախկին ոստիկաններ են, ուժային կառույցների իբր նախկին աշխատակիցներ:

Կարող են ասել, որ Հայաստանի ընդդիմադիր ուժերը հակաամերիկյան կամ հակաեվրոպական չեն, որ նրանք բոլորն էլ հայտարարում են, որ կառուցելու են գործընկերային հարաբերություններ նույն ԵՄ-ի կամ ԱՄՆ-ի հետ, Հայաստանի քաղաքական ուժերից որեւէ մեկը, համենայնդեպս՝ հիմնական ընդդիմադիր ուժերից որեւէ մեկը չի հայտարարել անգամ, որ դեմ է Հայաստանի ԵՄ անդամակցությանը, որ իրենց իշխանության գալու դեպքում այդ օրակարգը չեղարկվելու է, եւ Հայաստանը հայտարարելու է իր հավատարմությունը ԵԱՏՄ-ին կամ ՀԱՊԿ-ին: Նույնիսկ ավելի երկրորդական թվացող հարցերում են չափազանց զգուշավոր, օրինակ, որեւէ մեկը չի հայտարարում, որ նոր ատոմակայանը կառուցելու է Ռուսաստանի աջակցությամբ, կամ որեւէ մեկն աջակցություն չհայտնեց Իրանին՝ դատապարտելով ամերիկյան հարձակումները հարեւան եւ բարեկամ երկրի վրա:

Չնայած ընդդիմադիրներն իրենց պահում են չափազանց չեզոք եւ զգուշավոր, բայց դա ամենեւին երաշխիք չէ, որ արտաքին ուժերը կարող են թուլացնել գործող ռեժիմի աջակցությունը կամ անտարբեր լինել նրա տապալման հարցում: Դրա բացատրությունը շատ պարզ է. Փաշինյանի իշխանությունն այնքան թույլ եւ կամակատար է, որ դրանից ավելի կամակատար ուղղակի հնարավոր չէ գտնել: Ռուսական մի առակատիպ պատմություն կա. ռազմական բուհում սովորող տղան հարցնում է գնդապետ հորը՝ հայրիկ, ես կարո՞ղ եմ լեյտենանտ դառնալ, հայրը դրական է պատասխանում: Ասում է՝ իսկ կապիտա՞ն, հայրը նորից է դրական պատասխանում: Իսկ քեզ նման գնդապե՞տ: Հայրն ասում է. «Այո, գնդապետ էլ կարող ես դառնալ»: Իսկ գեներա՞լ՝ հարցնում է որդին: «Ոչ, գեներալ չես կարող դառնալ, գեներալները սեփական որդիներ ունեն»,- բացատրում է հայրը: Հիմա հասարակության կողմից մերժված ու բացառապես արտաքին աջակցության հույսին գտնվող Փաշինյանի իշխանությունը ԵՄ-ի ու ԱՄՆ-ի համար նման է հարազատ որդու, նրա տեղը ոչ մեկին չեն զիջի:

Սա ամենեւին չի նշանակում, որ ԱՄՆ-ն կամ ԵՄ-ն ամենակարող են, որ եթե նրանք պաշտպանում են փաշինյանական ռեժիմը, ուրեմն այն անհաղթելի է, նրանց որոշումները պարտադիր կատարման ենթակա են: Ընդհակառակը՝ աշխարհում բազմաթիվ դեպքեր կան, երբ երկրները, հասարակությունները հաղթել են արտաքին ուժերի դրածո ռեժիմներին եւ իրենք են որոշել, թե ով պետք է իրենց երկրում լինի իշխանություն, կամ թույլ չեն տվել, որ արտաքին ուժերը տապալեն իրենց երկրների օրինական կառավարություններին: Հենց հիմա մենք նման փայլուն դիմադրության երկու օրինակի ենք հետեւում. մեկը՝ Կուբայում, ԱՄՆ-ի հենց քթի տակ, մյուսը՝ մեր հարեւան Իրանում: Ուղղակի ընդդիմությունը պետք է ավելի բաց եւ հասկանալի խոսի հասարակության հետ եւ նրան պատրաստի պայքարի ու դիմադրության:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ՊՈՂՈՍԸ՝ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՍՈՒՊԵՐՄԱՐԿԵՏՈՒՄ

Քաղաքական ուժերի հարուստ ներկապնակով ենք գնում դեպի ԱԺ ընտրություններ: Մարդ կա՝ ասում է՝ դա լավ է, մարդ էլ կա՝ զզվում է դրանից: Եվ, իսկապես, դժվար է կողմնորոշվել այս հարցում: Մի կողմից, կարծես լավ է, որ կա քաղաքական ուժերի բազմազանություն եւ ընտրության լայն հնարավորություն: Խնդրեմ՝ սա սեւ է, սա՝ կարմիր, սա՝ սպիտակ, սա՝ մեծ, սա՝ փոքր, սա՝ աջ, սա՝ ձախ, սա՝ աջ կենտրոնամետ, սա՝ ծայրահեղ աջ, մյուսը՝ ծայրահեղ ձախ, սա՝ եվրոպամետ, սա՝ արեւմտամետ, սա՝ ռուսամետ, սա՝ թուրքամետ, սա՝ «վաբշե» ադրբեջանամետ: Ինչպես սուպերմարկետում, որն ուզում ես՝ ընտրիր: Մյուս կողմից էլ՝ ոչ բոլոր ընտրողներն այնքան «զահլա» ունեն, որ հա՛մ գնան ընտրության, հա՛մ էլ չարչարվեն՝ թացն ու չորն իրարից զատելու համար: Հաճախ ընտրությունների չեն էլ գնում, որպեսզի սխալ ընտրություն չկատարեն: Պատահում է, չէ՞, որ սուպերմարկետից մի զիզի-բիզի երշիկ ես բերում տուն, ու կինդ սկսում է փնովել ընտրությունդ՝ էս հիմարությանն ինչքա՞ն փող ես տվել…

Ամերիկացիներն այս իմաստով շատ պրագմատիկ են: Ունեն երկու հիմնական կուսակցություն՝ Հանրապետական եւ Դեմոկրատական: Ընտրությունը շատ մեծ չէ, բայց լավ է, որ սխալվելու հավանականությունն ընդամենը 50 տոկոս է: ԽՍՀՄ-ի ժամանակ ընդհանրապես լավ էր: Շատ ուզենայիր էլ՝ չէիր սխալվի: Բյուլետենի մեջ մի կուսակցություն էր՝ Կոմկուսը: Կար նաեւ մի այսպիսի օրինաչափություն՝ որքան քիչ էին կուսակցությունները, այնքան մեծ էր ընտրության մասնակիցների թիվը: Միակուսակցական ԽՍՀՄ-ի ժամանակ, օրինակ, ընտրություն չի եղել, որին այդ հսկա երկրի չափահաս բնակչության 90-96 տոկոսը մասնակցած չլինի: Եվ, պատկերացրեք, այնքան լավ էր կազմակերպված ամեն ինչ, որ ընտրատեղամասերում նույնիսկ հերթեր չէին գոյանում:

Ինչեւէ, մենք այսօր ԱԺ ընտրությունների ենք գնում քաղաքական ուժերի հարուստ ներկապնակով: Ինչքան քաղաքական մեռել կա հանրապետությունում, հարություն է առել ու, ինչպես պատահի, գնում է ընտրության… Մեկը մյուսի ցուցակով, մեկը մյուսի ավտոբուսով, մեկը մյուսի տապանով, մեկը մյուսի տակ, մեկը մյուսի վրա… Հիմա սա լա՞վ է, թե՞ վատ: Միակ նախընտրական դաշինքի մասին բան չունեմ ասելու, մարդիկ ազնվորեն խոստովանեցին, թե ովքեր են դաշինքում: Բայց դուք տեսեք, թե մնացած կուսակցություններն ինչ են անում: Ինչ բառ ասես՝ մտածել են, որ դաշինքները փաթեթավորեն որպես կուսակցություն ու այդպես ներկայանան… Էլ բլոկ, էլ կոնսոլիդացիա, էլ սատարում, էլ գաղափարական հենքի վրա համագործակցություն: Դե արի, Պողոս ջան, հա՛մ գնա ընտրության, հա՛մ սխալմամբ մի հիմար բան ընտրիր, հա՛մ էլ վերջում ք.քն ընկիր քո ընտրության ձեռը:

Ո՞վ է մեղավոր, որ Հայաստանն աչքի է ընկնում քաղաքական ուժերի ու դեմքերի այսպիսի բազմազանությամբ: Ես չէի ասի՝ Պողոսը: Պողոսն ի՞նչ կարող է անել, երբ տեղից վերկացողն իրեն վարչապետի թեկնածու է հռչակում: Մեռնեմ օրենքին, ինչպես ասում են: Դեմոկրատիա է, քաղաքական ազատություններ… Ո՞ւմ կարող ես ասել՝ մի գնա ընտրությունների: Բայց երանի թե ամեն ինչ պայմանավորված լիներ ոչ թե օրենքի ու դեմոկրատիայի, այլ պետության ու ժողովրդի պահանջներով: Ամենայն հարգանքով բոլոր քաղաքական ուժերի ու դեմքերի դավանած արժեքների հանդեպ, ուզում եմ հարցնել՝ քանի՞ գրոշ արժեն դրանք, եթե այս պահին չեք կարողանում ծառայեցնել պետության ու ժողովրդի շահերին եւ երկիրն այս վիճակից դուրս բերելու գործին: Իշխանափոխության հարց եք, չէ՞, դրել, կարելի է, չէ՞, ասել, որ դա է միակ օրակարգը… Բա էլ ո՞ւմ է պետք ընդդիմադիր դաշտի այս բազմազանությունը:

Իշխանությունը պարզ խնդիր է դրել՝ հեռացրեք ինձ, եթե կարող եք, այլապես ես քանդելու, ոչնչացնելու եմ ամեն ինչ, որովհետեւ այս երկրի, այս անկախության, այս ժողովրդի թշնամին եմ: Մենք եկել՝ ընդդիմադիր դաշտում իրար անուն ենք դնում՝ ես սրա հետ չեմ գնա, նրա հետ կգնամ, ես սրա հետ կոնսոլիդացվում եմ, բայց նրա հետ չեմ կոնսոլիդացվում, ես ուզում եմ տապանով գնալ, ես նախընտրում եմ ավտոբուսը, մեկը թեւերն է թափահարում օդում, էն մյուսը՝ նախընտրում ՔՊ-ից մարդ պոկելով գնալ իշխանափոխության: Իշխանությանն էինք ասում «դուռդոմ», մինչդեռ, հարգելի ընդդիմություն, անհրաժեշտություն է առաջացել ընդդիմության դաշտը վերանայելու:

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

ՊԱՏԵՐԱԶՄ

ՈՒԿՐԱԻՆԱՆ ԵԼ ԻՍՐԱՅԵԼԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԻՐ ՀԱՐՑԵՐՆ ՈՒՆԻ

«Դրապարակի» զրուցակիցն Ուկրաինայի նախագահին առընթեր Ռազմավարական հետազոտությունների ազգային ինստիտուտի (ՌՀԱԻ) արտաքին հետազոտությունների կենտրոնի նոր մարտահրավերների բաժնի ղեկավար **Ելենա Բորդիլովսկան** է:

- Մերձավոր Արեւելքում պատերազմական իրավիճակը՝ կապված Իրանի դեմ Իսրայելի եւ ԱՄՆ-ի ռազմական արշավի հետ, ամբողջ աշխարհի ուշադրությունը սեւեռել է իր վրա: Ակնհայտ է, որ այն միջազգային հանրության եւ ԱՄՆ ուշադրությունը շեղել է ռուս-ուկրաինական հակամարտության բանակցային գործընթացից: Ի՞նչ ռիսկեր եւ հետեւանքներ եք տեսնում Ուկրաինայի համար:

- Մի քանի դիտարկում. առաջինը՝ այո, իսկապես շեղում է ուշադրությունն Ուկրաինայից: Եվ մեր խաղաղ բանակցություններն ԱՄՆ-ի հետ, որոնք առանց այդ էլ, անկեղծ ասած, դժվար է հաջողված համարել, չգիտես, թե ուր են անհետացել, հայտնի չէ՝ որտեղ դրանք կանցկացվեն, ինչպես, հիմա արդեն ոչ ոք ոչինչ չգիտի: Մյուս ասպեկտը. Ուկրաինան նոր հնարավորություններ է ստացել՝ իրեն հայտարարելու շատ կարեւոր խաղացող անվտանգության ոլորտում, որովհետեւ մենք բազմաթիվ հարցումներ ենք ստանում՝ համագործակցել Իրանի կողմից Շահեդ-ներով հարձակումների դեմ պայքարում, առաջին հերթին Պարսից ծոցի երկրներից, որոնց հետ Ուկրաինան բավականին կառուցողական հարաբերություններ ունի: Օրինակ, ԱՄԷ-ն ակտիվորեն մասնակցում է գերիների փոխանակման եւ ուկրաինացի ռազմագերիներին հայրենիք վերադարձնելու գործընթացին: Մեր երկիրը բացառիկ փորձ ունի իրանական Շահեդ-ներ խոցելու հարցում, ուրիշ ոչ մի երկիր նման փորձառություն չունի: Մենք դրանց ձայնը լավ գիտենք, այն լսում ենք 2023-ից ի վեր եւ գիտենք՝ ինչպես վարվել այդ ԱԹՍ-ների հետ: Մենք ոչ միայն ունենք որսացող դրոններ, այլեւ այդ ամենը կատարում ենք համակարգային կերպով: Մեր մասնագետներն արդեն մեկնել են Ծոցի մի քանի երկրներ, որպեսզի խորհրդատվություն տրամադրեն, եւ կարծում եմ՝ այդ համագործակցությունը երկար կշարունակվի: Եվ երրորդ գործոնը. այդ պատերազմը մեզ ձեռնտու չէ, որովհետեւ որքան երկար է տեւում, այնքան մեծանում են ռիսկերը, օրինակ, նավթի գների աճի առումով, իսկ դա նշանակում է, որ Ռուսաստանը շարունակելու է գումար աշխատել եւ դա ուղղել մեր դեմ պատերազմին: Ուստի՝ այս պատերազմը մեզ պետք չէ:

- Թրամփն ակնարկել է, որ Իրանի դեմ պատերազմը շաբաթներ կտեւի: Դուք ի՞նչ եք կանխատեսում:

- Անկեղծ ասած, չգիտեմ այդ հարցի պատասխանը, եւ ասել, թե Ուկրաինան ազդեցության իրական լծակներ ունի Իսրայելի կամ ԱՄՆ-ի վրա, դժվար է պնդել: Մենք գիտենք, որ Իսրայելի վարչապետ Բենիամին Նեթանյահուն հեռախոսազրույց ունենալու խնդրանքով դիմել է մեր նախագահին՝ քննարկելու որոշակի համագործակցության հարցեր, այդ թվում՝ ռազմական ոլորտում, բայց այս ամենը շատ բարդ է, որովհետեւ Ուկրաինան բազմիցս օգնության խնդրանքով դիմել է Իսրայելին եւ 2022-ից ի վեր ստացել բազմաթիվ մերժումներ: Նույնիսկ այն դեպքերում, երբ ԱՄՆ-ից օգնություն ստանալու համար ընդամենն անհրաժեշտ էր ստանալ Թել Ավիվի համաձայնությունը, օրինակ, կապված ամերիկյան հին հրթիռների հետ, որոնք Իսրայելին այդքան պետք չէին, մենք դրա կարիքն ավելի շատ ունեինք, հատկապես՝ պատերազմի առաջին տարիներին, Իսրայելը դա թույլ չտվեց: Մերժում էր մեր ՊՆ ղեկավարի հետ հանդիպման խնդրանքը, Իսրայել չիրավիրեցին մեր նախագահին եւ այլն: Այնպես որ, մենք էլ Իսրայելին ուղղված մեր հարցերի ցանկն ունենք: Չգիտեմ՝ ինչպես կշարունակվի այս ամենը, բաց քննարկում չկա, առայժմ որոշ բանակցություններ տեղի են ունենում դեսպանատների մակարդակով, հետագան՝ կտեսնենք: Արդյո՞ք կազդի դա պատերազմը դադարեցնելու վրա, դժվար է ասել, իսկ մնացյալն Ուկրաինայից կախված չէ: Առավել եւս՝ ԱՄՆ-ի վրա մենք չենք կարող ազդել:

- Ժամանակին աշխատել եք Պակիստանում Ուկրաինայի դեսպանատանը, նաեւ՝ Հնդկաստանում: Պակիստանը Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ չուներ՝ ղարաբաղյան հակամարտության ողջ պատմության ժամանակ Ադրբեջանին սատարելու պատճառով: Այսօր աստիճանաբար հզորանում է Պակիստան-Ադրբեջան-Թուրքիա ռազմավարական դաշինքը, կարելի է ասել՝ «3 պետություն՝ 1 ազգ» սկզբունքով: Ինչպիսի՞ն են Կիեւի հարաբերություններն Իսլամաբադի եւ Դելիի հետ:

- Այո, գիտենք, որ ղարաբաղյան երկրորդ պատերազմի ժամանակ Պակիստանը մեծապես գործակցել է Ադրբեջանի հետ: Գիտենք նաեւ, որ Ադրբեջանն իր հերթին օգնել է Պակիստանին՝ անցյալ տարի Հնդկաստանի դեմ ռազմական առճակատման ժամանակ, Բաքուն եւ Իսլամաբադը սերտորեն համագործակցում են, օրինակ՝ ինքնաթիռների հետ կապված պայմանագրեր ունեն, բայց չեմ կարծում, որ Պակիստանն Ադրբեջանի եւ Թուրքիայի հետ հարաբերությունները կառուցում է մեկ ազգի սկզբունքով, որովհետեւ Պակիստանը թյուրքական պետություն չէ: Այո, այս երեք երկրները շատ ընդհանրություններ ունեն, օրինակ՝ սուննի իսլամ, բայց խոսքը հզոր ռազմատեխնիկական համագործակցության մասին է, գործընկերային հարաբերությունների, որոնք փոխվստահելի են դարձել ընդհուպ մարտական գործողությունների ժամանակ: Միաժամանակ Պակիստանը շատ ակտիվ կապեր է ստեղծում մյուս իսլամական երկրների հետ, օրինակ՝ անցյալ տարվա սեպտեմբերին ռազմատեխնիկական համագործակցության համաձայնագիր կնքեց Սաուդյան Արաբիայի հետ: Այս օրերին եղան պաշտոնական փոխայցեր, եւ հաստատվեց, որ շարունակելու են հանձնառու լինել այդ համագործակցությանը: Միաժամանակ, Պակիստանը շարունակում է երկխոսել Իրանի հետ, որին հարեւան բարեկամ երկիր են համարում, այնպես որ՝ Պակիստանը հեշտ իրավիճակում չէ. այնպես անել, որ մի կողմից կատարվեն պարտավորվածությունները, մյուս կողմից՝ այդ կոնֆլիկտը չսպառնա բուն Պակիստանին: Ինչ վերաբերում է Հարավային Ասիայի վերաբերյալ Ուկրաինայի դիրքորոշմանը, ապա այն հստակ է. մենք համագործակցել ենք թե՛ Հնդկաստանի եւ թե՛ Պակիստանի հետ, այնտեղ, որտեղ դա բխել է մեր շահերից, մենք երկու երկրների հետ էլ պահել ենք համագործակցությունը, այդ թվում՝ ռազմատեխնիկական ոլորտում, ճիշտ է՝ մի փոքր տարբեր ուղղություններով: Օրինակ՝ Հնդկաստանի դեպքում խոսքն ավելի ավիացիայի մասին է, Պակիստանի դեպքում՝ տանկաշինության: Գյուղատնտեսական ոլորտում էլ այդ երկրների հետ առնչություն ունենք, մատակարարում ենք ձեթ, ալյուր, հացահատիկ եւ այլն: Կրթական ոլորտում էլ, նախքան պատերազմը, բազմաթիվ հնդիկ եւ պակիստանցի ուսանողներ ունեինք: Ինչ վերաբերում է Ուկրաինայի պատերազմին այդ երկրների դիրքորոշմանը, Հնդկաստանն էլ, Պակիստանն էլ պաշտոնապես չեզոք մոտեցում ունեն, թեեւ կարող եմ ասել՝ Պակիստանում մեզ ավելի լավ են ընկալում, քանի որ մենք ընդհանրություններ ունենք եւ ունենք հարեւաններ, որոնք բազմիցս գերազանցում են ուժի գործադրումը, որից պետք է պաշտպանվել, դրա համար նրանք գիտեն, որ մենք մարտնչում ենք մեր անկախության, գոյատեւման համար: Միաժամանակ, Հնդկաստանը սերտ հարաբերություններ ունի ՌԴ-ի հետ՝ զուգահեռաբար չեզոք դիրքորոշում հայտնելով ռուս-ուկրաինական պատերազմի հարցում: Ուկրաինայի եւ Պակիստանի համագործակցությունն ընդգրկում է դեղորայքի ոլորտից մինչեւ գյուղատնտեսական եւ ռազմատեխնիկական:

- Պակիստանն ընկալվում է որպես ռազմականացված պետություն: 2026 թ. դրությամբ Հնդկաստանի եւ Պակիստանի միջեւ հարաբերությունները շարունակում են մնալ լարված՝ հատկապես Քաշմիրի հարցի եւ սահմանային բախումների պատճառով: 2025 թ. գարնանային էսկալացիայից հետո երկու միջուկային տերությունների միջեւ հակամարտությունների ռիսկը մնում է բարձր: Ի՞նչ սցենար եք կանխատեսում:

- Չեմ կարծում, որ պատճառ կա մտահոգվելու, թե Պակիստանի եւ Հնդկաստանի առճակատումը կարող է վերածվել միջուկայինի, նախորդ գարնանը 2 երկրների միջեւ էսկալացիան հերթականն էր՝ ո՛չ առաջինը, ո՛չ էլ, ցավոք սրտի, վերջինը: Յուրաքանչյուրը համոզված է, որ հենց ինքն է հաղթել այդ հակամարտությունում: Ամեն դեպքում, կառավարություններն այդպես են վստահեցնում սեփական ժողովուրդներին: Պակիստանը ցույց է տվել իր առավելությունները՝ գործակցելով Չինաստանի, Ադրբեջանի, Թուրքիայի հետ, որոնք օգնել են Իսլամաբադին՝ Հնդկաստանի դեմ ռազմական կոնֆլիկտի պարագայում: Հնդկաստանն իր հերթին հայտարարում է, որ ինքնուրույնաբար է պայքարում սպառնալիքների դեմ: 2 երկրների միջեւ հարաբերություններն իրոք շատ լարված են, եւ հույս ունեմ՝ միջուկային առճակատման չեն վերածվի:

- Օրերս էլ կրկին սրվեց Պակիստան-Աֆղանստան հակամարտությունը, կան մարդկային կորուստներ: Այս էսկալացիայի պատճառը ո՞րն է:

- Պակիստանա-աֆղանական հակամարտությունն էլ նոր չէ. կան հին հակասություններ՝ կապված սահմանային գոտու հաստատման հետ, որոնք Պակիստանը չի կարողանում լուծել Աֆղանստանի եւ ոչ մի կառավարության հետ՝ թագավորից մինչեւ մոջահեդներ, առաջին թալիբների ու հիմա՝ երկրորդ թալիբների օրոք: Պակիստանն Աֆղանստանին մեղադրում է իր երկրի տարածքում պարբերաբար ահաբեկչություններ կատարելու մեջ, եւ մեծ խնդիր է աֆղանացի փախստականների հոսքը, որոնց սկսել են ուղարկել երկրի արեւմտյան մասը: Այնպես որ, խնդիրներն ու տարաձայնությունները շատ են ու բազմաշերտ:

Արա ԱԼՈՅԱՆ

ԻՋԵՎԱՆՈՒՄ ՍՈՎԱԾ ՇՈՒՆԸ ՀԱՐՁԱԿՎԵԼ Է ԱՆՑՈՐԴՆԵՐԻ ՎՐԱ

Մարտի 12-ից Իջեւանի կենտրոնական փողոցներից մեկում՝ Անկախության փողոցում, հայտնվել է մի սպիտակ շուն, որն անընդհատ հարձակվում է անցորդների վրա, պատռում նրանց իրերը: Իջեւանցիներն ասում են, որ շունն սոված է, մարդկանց վրա հարձակումներով իր համար կեր է հայթայթում: Այդ շունը հարձակվել է նաեւ Իջեւանի համայնքապետարանի 2 աշխատակցուհիների վրա: Նրանցից մեկի ձեռքի փաթեթում մոմեր են եղել, շունը դրանք հոշոտել է: Պատռել է նաեւ համայնքապետարանի մյուս աշխատակցուհու ձեռքի փաթեթը, որտեղ թխվածքներ են եղել, ու դրանք եւս կերել: Իջեւանում անհանգստացած են շան վարքից, հարձակումներից: Քանի որ հիշում են անցյալ տարվա նախադեպը, երբ ամռանը Ռիժիկ անունով շունը Իջեւանում ագրեսիվ վարք էր ցուցաբերում, հարձակվում անցորդների վրա: 2025թ. հուլիսին հատուկ ավտոմեքենայով Ռիժիկին տեղափոխեցին Երեւանում գործող շների կացարան: Իջեւանի համայնքապետարանը թափառող, անտեր շների ստերջացման ծրագրեր է իրականացրել, այդ թվում՝ Հայաստանում առաքելություն իրականացրած եվրոպական դիտորդների աջակցությամբ, սակայն թափառող, անտեր շների խնդիրը չի լուծվում: Այդ խնդիրն առկա է նաեւ Տավուշի մարզի այլ քաղաքներում:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ԻՐԵՆՔ ՀԱՍԵԼ ԵՆ ՄԻ ՋՐԲԱԺԱՆԻ, ՈՐ ԵՏ ԳՆԱԼ ՉԵՆ ԿԱՐՈՂ, ԲԱՅՑ ՄԵՆՔ ԷԼ ԵՏ ԳՆԱԼ ՉԵՆՔ ԿԱՐՈՂ

*Երգիչ, երգահան **Լիլիթ Բլեյանի** հետ զրուցել ենք փաշինյանական «իրական Հայաստանի» մասին:*

- Ստրասբուրգում, ի լուր աշխարհի, Փաշինյանը Հայ եկեղեցին անվանեց «պատերազմի կուսակցություն»: Իսկ ժամանակ առաջ մեր Եկեղեցին «ահաբեկչական կառույց» էր անվանել Փաշազադեն՝ Բաքվից: Կարո՞ղ ենք ասել, որ Փաշինյանը սեփական տան լվացքը փռեց, ի տես աշխարհի, ամենաքստմնելի կերպով եւ Արցախ վերադարձի իրավունքը որոշեց արցախցիների փոխարեն:

- Կարո՞ղ ենք վճռականություն ունենալ՝ ամրագրելով մեզ համար, որ այս մարդն ուղղակի հրաժարվում է Հայաստանից: Որ ինքը հանդես չի գալիս Հայաստանի շահերից, մեր ազգային երազանքներից ու ժողովրդի միասնական խնդիրներից եւ դա չի թաքցնում, բարձրաձայնում է: Ասում է՝ ես ունեմ պայմանավորվածություններ, ինքը դրա անունը դնում է քաղաքականություն, կոշտ քաղաքական օրակարգ: Բայց մեծ հաշվով ասում է՝ ես գնացել, բան եմ պայմանավորվել, եւ ինձ պետք է, որ այսպես լինի: Սա այն դեպքն է, երբ ասում են՝ տղա եք, այնպես արեք, որ չկարողանամ անել: Բաց տեքստով է ասում: Ինքն իր քայլն անում է: Գալիս է հաջորդ հարցը՝ մենք ի՞նչ ենք անելու: Բայց մենք իրենից պահանջներ չունենք՝ այս ամենը տեսնելուց հետո: Կոնկրետ ես իրենից պահանջ չունեմ: Կարող էի ունենալ, ասելով՝ հրաժարական տուր, եւ ասել եմ նախկինում մի քանի անգամ, բայց գիտեմ, որ ինքը դա չի անելու, իր պլանների մեջ չի մտնում: Ինքը շատ ուղիղ է խոսում, շատ բաց է ասում իր մտադրությունների, ծրագրերի մասին: Ասում է՝ գնացել, պայմանավորվել եմ, որ Հայաստանն այլեւս այն երկիրը չի լինելու, որ եղել է: Այսինքն, երկիր, որ բոլորս ցանկացել ենք լինի:

- Պայմանավորվել ասելով՝ ո՞ւմ նկատի ունեք՝ մեր օրակարգը թելադրող թշնամի երկրների՞ն, որոնց բարբաջած «խաղաղության» ենթատեքստում մեր ինքնաոչնչացումն է դրված:

- Այն մարդու հետ, որն իր «պարտնյորն» է, դրա անունը տեր է, թե գործընկեր, գուցե իրենք բիզնես պրոյեկտ են անում՝ մենք չգիտենք: Ասում է, որ ես պայմանավորվել եմ, որ մենք թուղթ պետք է ստորագրենք, էդ թղթի անունն էլ դնում են «խաղաղության պայմանագիր»: Բայց բոլորս հասկանում ենք, որ դա Հայաստանի վերափոխման, Հայաստանի ամբողջ պատկերը, շարունակությունը փոխելու մասին թուղթ է: Եվ դա ինչ-որ սահմանի, հաղորդակցության կամ ուղու հետ կապված չէ միայն. իրենք ստորագրելու են թուղթ, որ Հայաստանը պետք է փոխվի, դառնա ուրիշ երկիր: Եվ ինքը դա բաց ասում է:

- Սա հաշվետվություն է իր տերերի՞ն, որ՝ տեսեք, ես այս բաներն արել եմ եւ դեռ անելու եմ մնացածը:

- Հավանաբար, սա հաշվետվության ձեւ է, ցույց է տալիս, որ, տեսեք՝ հավատարիմ եմ իր ստանձնած պարտականություններին: Ես պայմանավորվել եմ եւ իմ պայմանավորվածությունները պահում եմ: Գալիս եւ բոլորի դեմքին ասում եմ, իսկ ով որ խնդիր ունի իմ ասածների հետ, իրենց նկատմամբ քրեական գործեր եմ հարուցում, միջազգային մակարդակով հռչակում եմ խաղաղության դեմ ոտնձգություն անողներ, ահաբեկիչներ եւ այլն: Քանի որ խնդիր կա Հայաստանի կերպը փոխելու, նախ հիշողությունը պետք է փոխի: Եվ ասում է, որ հիշողությունը մեզ համար այլեւս քաղաքական օրակարգի խնդիր է, որ մենք դրա հետ պետք է աշխատենք: Եվ դա սկսում են դպրոցից, թանգարանից. այդպես ոչնչացնում են տասնամյակներով ստեղծված հիշողության պահպանման մեխանիզմները ինստիտուցիոնալ մակարդակով, մշակութային արժեհամակարգով: Եվ իրենք դրա հետեւից պետք է գնան մինչեւ վերջ:

- Կարո՞ղ ենք ասել, որ հանձն առած այդ «տնային աշխատանքը» հետեւողականորեն կատարվում է. ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրենին աշխատանքից ազատել, «Արցախ» տեղանունը հիշատակելու պաշտոնական արգելք, ցեղասպանության հրողության փաստը կասկածի տակ դնել, Արարատ լեռան պատկերը սահմանային կնիքներից հանել, եւ այսպես շարունակ: Ու ինչ՞ը են դեռ անելու:

- Փաշինյանն ուղիղ ասաց, որ ինքն է ազատել թանգարանի տնօրենին, քանի որ պետության արտաքին քաղաքականությունից է շեղվել: Բայց էպիզոդը շատ պատկերավոր է. փաստորեն, ցեղասպանության թանգարանի տնօրենը չի կարող բարձրաստիճան հյուրին չպատմել ցեղասպանության մասին, որի շարունակությունն Արցախն էր: Ինքը՝ որպես մասնագետ, այդ ամենը շատ համակարգային է պատկերացնում, եւ դա իր ուղիղ պարտականությունն է: Եթե դա չի անում, ապա ինչ գործ ունի ցեղասպանության թանգարանի տնօրենի պաշտոնում: Իսկ Նիկոլն ասում է, որ նա պետական պաշտոնյա է եւ պետության գծից շեղվել է: Պետությունն ինչ կապ ունի գիտահետազոտական ինստիտուտի հետ: Եվ հետո ինչ են անում՝ հայտնվում են հանրային օղակներ, որոնք սկսում են իբր քննադատել Նիկոլի քայլը, որ չպիտի հեռացներ, բայց միեւնույն պահին ասում են, որ «պրոտոկոլից» շեղում է եղել. այ, պետք է մեղադրել նրանց, ովքեր մտցրել են Վենսի այցը Ծիծեռնակաբերդ՝ իմանալով, որ տնօրենը կարող է համարձակվել գիրք նվիրել: Այսինքն, նորմալացնում են այն, որ ՀՀ այցելող օտարերկրյա բարձրաստիճան պաշտոնյան այլեւս չպիտի այցելի Ծիծեռնակաբերդ եւ չպիտի առնչվի մեր ցեղասպանված լինելու փաստի հետ: Անձամբ ինքն ասել է՝ ես սա անող եմ: Հանձն է առել եւ հիմա հանրայնորեն հաշվետվություն է տալիս, եւ մեկն էլ այդ հանձն առածներից Հայաստանի քարտեզով կրծքանշանն է: Իրենք ստեղծել են «Իրական Հայաստանի գեղագիտություն» կոչվող այդ փաստաթուղթը, որի շրջանակներում փորձում են ներդնել հենց այդ «գեղագիտությունը», որը մենք տեսնում ենք եւ դրա դեմ պիտի քայլեր անենք: Այդ պայմանագիրն իր անձնականն է, ոչ ոք իրեն չի լիազորել գնալ եւ այդ պայմաններով բանակցել: Որովհետեւ, մեծ հաշվով, ինքն առանց մանդատ մարդ է: 2021-ի մանդատը, որն անընդհատ մեր աչքն է մտցնում, իրեն չէր տրվել այդ ամենն անելու համար: Հիմա ինքն առանց մանդատ բանակցող է եւ ում հետ որ բանակցում է, ասում է՝ տեր եմ իմ ասածներին: Ուղղակի մենք հանձնվել ենք Ադրբեջանի ցանկություններին: Եթե Արցախը տալուց հետո մենք վախենում ենք պատերազմից, ուրեմն Ադրբեջանի ցանկությունը միայն Արցախը չէր: Եվ Նիկոլը չի էլ խուսափում, հենց այդպես էլ ասում է, որ մենք պետք է սիրաշահենք:

- Իր մտքի փայլատակում «իրական Հայաստանի» քարտեզը, որ խփել է դոշին՝ թաղման թափորում քայլողի նման, հաշվետվությո՞ւն է իր տերերին՝ առանց Արցախ եւ պատմական հիշողության, թե սա է թանկն ինձ համար, ողորմացեք:

- Ինքը մի թանկ բան ունի, դա իր սեփական կաշին է: Եթե Արցախ է զոհել, սերունդ է զոհել՝ մի քանի հազար հոգի, կորուստներ է տվել անվերականգնելի: Այնքան վնաս, որ ինքն է հասցրել, ցեղասպանությունից հետո ոչ ոք չէր հասցրել Հայաստանին: Մեր պատմական տարածք Արցախում, որտեղ միշտ հայեր են ապրել, այլեւս ոչ մի հայ չի ապրում: Կրճատվել է մեր կենսական տարածքը: Ինքն այդ ամենը հասկանում է: Այդ ամենից հետո կոստյումը հագել է, փողկապը կապել եւ գնացել՝ կառավարության նիստ է վարել: Այսինքն, չի գնացել՝ գլուխը մտցրել հողի մեջ եւ ոռնացել ցավից: Դա նշանակում է, որ այդ ամենն իր համար վերջին կարեւորությունը չէ: Իր համար վերջին կարեւորությունն իր անձն է՝ ինչպես եւս մեկ օր ապրել այս մոլորակի վրա: Թվում է, թե այդքան զոհերից, այդքան կորուստներից հետո ինչ մի բան է դա, որ իր համար այդքան թանկ է: Բայց այդպես է՝ միակ բանը, որ իր համար կարեւոր է, ինքն է, իր անձը, որ ինքը շարունակի գոյություն ունենալ հողեղեն կյանքում: Թող ներվի ասելը, բայց ոչ մի կերպ ես չեմ կարողանում մտնել այդ տրամաբանության մեջ, չի ստացվում: Փորձել եմ ամեն կերպ, բայց չի ստացվել: Իր կողքիններին ինչ-որ կերպ հասկանում եմ՝ վախը, մանիպուլյացիան, բայց իր մոտիվացիան հնարավոր չէ հասկանալ, անբացատրելի մի բան է:

- Խաղաղությունից խոսում է մի մարդ, որը 3-4 պատերազմ է բերել, պարբերաբար սպառնում է նոր պատերազմով, եթե չզիջենք թշնամուն, եւ դրա անունը դրել է, թե՝ խաղաղություն եմ բերել: Ինչպե՞ս հավատանք պարտվածի, զիջողի, խեղճի խաղաղությանը:

- Այդպես չեն գնում խաղաղության, այդպես ճնշում են գործադրում հանրային գիտակցության վրա՝ հասկանալով, որ հասարակությունը շատ փխրուն է, պատերազմի տված վերքերը շատ խորն են, եւ վախը խոր բույն է դրել մեր ժողովրդի մեջ: Սա խաղ է եւ շատ տգեղ խաղ: Այս ամենը գուցե հասկանալի լիներ, եթե այլ կերպ վարվեր. ի վերջո, եղել է պատերազմ, եղել են կորուստներ: Բայց ինչպե՞ս է դա մատուցում, ինչպե՞ս է հարաբերվում կորուստներ կրած ժողովրդի հետ: Այդ ինքնագոհ ցինիզմն է ամենաանտանելին, որով ինքը խոսում է: Ես հասկանում եմ այդ ինքնապաշտպանական պահվածքը: Բայց ինքը եթե ասեր, որ սա բոլորիս մեծ ցավն է, որ մենք անընորմալ ցավ ենք տարել եւ ունենք մեծ խնդիրներ, որ, ժողովո՛ւրդ, եկեք սա համարենք մեր ընդհանուր ցավը եւ խոսենք իրար հետ, հասկանանք իրար, այդ դեպքում գուցե ընկալումն ա՛յլ լիներ: Բայց ի՞նչ է անում. սկսում է քրեական գործեր հարուցել բոլոր չհամաձայնողների դեմ, բանտերն է լցնում, թշնամանք է հրահրում բոլոր հնարավոր մեթոդներով: Քարոզչական մեքենա է գործի դրել, որը թշնամանքի գլխավոր սնուցող աղբյուրն է: Երկիրը դարձրել է ինչ-որ թունավոր մեղվաբույն, եւ անընդհատ թունավոր մեղր է արտադրվում, որը ո՛չ այն է՝ ուտես, ո՛չ այն է՝ սոված մնաս. փակ համակարգ ենք դարձել, զզվելի: Այն թանկարժեք կորուստը, որ մենք ենք ունեցել, արժանի չէ այս թունավոր վիճակին, մենք մի քիչ վեհ պետք է տանեինք մեր ցավը, բայց այնքան տգեղ ենք այդ ամեն ինչը տանում: Ենթադրենք, գուցե ինքը վատ հրամանատար է եղել, գուցե ոչ մի բանից չի հասկացել, բայց պահվածքը, դրանից հետո, բնորոշ է դեռահաս մեկին, որը դեռ չի ձեւավորվել որպես մարդ կամ սեփական կաշին փրկելու խնդիր ունի: Սակայն նույնիսկ այդքանով ինքը չի կարող փրկվել. դա պետք է հասկանա: Լավ, ձգեց-ձգեց, մինչեւ ե՞րբ: Մահկանացուների մոլորակի վրա դու ի՞նչ ես ուզում թողնել քեզնից հետո:

- Հաջողե՞ց Եկեղեցու դեմ պայքարը:

- Չի հաջողել այս պահին, բարեբախտաբար, որովհետեւ մի քիչ ավելի խորն են Եկեղեցու արմատները, դիրքերն այլ են, աղբյուրը, որից Եկեղեցին սնվում է, բոլորովին այլ է: Նույնիսկ հակառակ արդյունքը եղավ. մարդիկ փարվեցին Եկեղեցուն, հեղինակությունն ավելի բարձրացավ, ի վերջո՝ մաքրվեց Եկեղեցին տիրադավներից, բարեփոխվեց: Եվ տարիներ հետո գուցե մենք այս բարերար ազդեցության պտուղները քաղենք, եթե բախտներս բերի, եւ Հայաստանը շարունակի մնալ այս լեռնաշխարհում՝ գոնե այս փոքրիկ կտորի վրա:

- Հե՞շտ է լինելու հունիսի 7-ը:

- Իրենք հետդարձի ճանապարհ չունեցողներն են, բոլոր կամուրջներն իրենց հետեւից այրել են եւ եկել հասել են մի ջրբաժանի, որ իրենք ետ գնալ չեն կարող, բայց մենք էլ ետ գնալ չենք կարող: Եթե մարդը արքեպիսկոպոսներ է ձերբակալում, կաթողիկոսի դեմ է քրեական գործ հարուցում, միջազգային ատյաններն է օգտագործում իր կեղտոտ ելույթների համար, այդքանից հետո ինչն իրեն ետ պիտի պահի, որ չկիրառի տարբեր գործիքներ, որպեսզի ընտրություններից հետո մնա: Իսկ մե՞նք ինչ պիտի անենք: Մենք չպիտի գնանք ու միայն քվե տանք: Մենք մթնոլորտն այնպիսին պիտի դարձնենք, որ ուղղակի հնարավոր չլինի իր շարունակվելը: Չթողնենք միայն խեղճ ընտրողի վրա: Մենք պիտի կարողանանք ձեւավորել այդ «ոչ»-ի մթնոլորտը, որ իշխանությունները չկարողանան անօրինական ինչ-որ բան անել: Դա չպետք է լինի թշնամանքի մթնոլորտ, դա պետք է լինի գիտակցությունը բացելու, միտքն ազատելու, միասնական լինելու մթնոլորտ:

Հուսիկ Արա

ՍՐՏԻԿ ԱՐԵՔ ՈՒ ԱՆՑԵՔ

Գարուն է: Լոռիում ձյան տակից դուրս են գալիս առաջին ձնծաղիկները:

Վանաձորում՝ ՔՊ-ի գովազդային պաստառները: Բնությունն անկեղծ է: Քաղաքականությունը՝ հնարամիտ: Բնությունն իր օրենքն ունի: Քաղաքականությունը՝ իր: Մինչդեռ ոչ ոք հստակ չի ասել՝ քարոզարշավը սկսվա՞ծ է, թե՝ ոչ: ՔՊ-ի համար դա մոտավորապես այն նշանակությունն ունի, ինչ լուսացույցի կարմիրը՝ շտապողի:

Վանաձորի կենտրոնում, Թումանյան հրապարակում, մի քանի օր եռուզեռ էր:

Հատուկ համազգեստով մարդիկ, վերամբարձ մեքենա, մետաղական հսկա կառուցվածք: Ապամոնտաժում էին հին պաստառները: Սովորական բան:

Թեեւ պաստառների համար գովազդատուները վճարում էին համայնքապետարանին՝ քաղաքի բյուջեն շահում էր:

Անցորդներն անտարբեր էին: Հին գովազդը գնում է, նորը՝ գալիս, ի՞նչ տարբերություն: Բայց այս անգամ տարբերություն կար: Աշխատանքների ավարտից հետո վեր խոյացավ հսկայական պաստառը: Պարզվեց՝ ՔՊ-ի գովազդային պաստառն է: Պարզ, մաքուր, գրեթե դատարկ, եւ դա, թերեւս, ամենաանկեղծ մասն է:

Որովհետեւ ի՞նչ գրեն: Գրեն՝ պատերազմ հրահրեցինք, հազարավոր զոհեր տվեցինք, կորուստներ ունեցանք, հայրենի՞ք հանձնեցինք... Չէ՛: Դա պաստառի վրա չի տեղավորվի, դա մնում է մարդկանց հիշողության մեջ:

Փոխարենը՝ թվեր կան: Սիրուն թվեր՝ նվազագույն կենսաթոշակը 16 հազարից դարձել է 46 հազար: Բայց չեն ասում՝ այդ 46 հազարով մարդը քանի՞ օր կարող է ապրել: Չեն ասում՝ գներն ինչ են եղել այդ ընթացքում: Պաստառի կենտրոնում «Խաղաղություն» բառն է, որը դարձել է ե՛ւ խոստում, ե՛ւ արդարացում, ե՛ւ թշնամու պահանջների առաջ խղճալի խոնարհման սիմվոլ:

Եվ, իհարկե, սրտիկը: Փոքրիկ, կլորիկ, անմեղ սրտիկ: Կարծես հրահանգ են իջեցնում՝ «Անցար՝ սրտիկ արա»: Ինչպես եկեղեցու դիմաց խաչակնքվելն է սովորություն: Քաղաքական հավատքի նոր ծես է երեւի սրտիկելը:

Ասում են՝ սա դեռ սկիզբն է: Հարյուրավոր պաստառներ են լինելու ամենուր: Վահանակներ՝ ամեն քայլափոխի: Ասում են՝ նույնիսկ Վանաձորի քաղաքային լճի շուրջը, որտեղ գրված է՝ «լողանալն արգելված է», պաստառներ են փակցնելու: «Խաղաղություն»: «Կենսաթոշակ»: Սրտիկ: Լողանալ չի կարելի: Գովազդել կարելի է:

Իսկ պաստառների համար ո՞վ է վճարում: Մինչեւ հիմա բիզնեսն էր վճարում քաղաքին: Իսկ հիմա՞: Քաղաքապետարանի բյուջեն հարստանալո՞ւ է: Թե՞ այս անգամ կարելի է պարզապես... չվճարել: Խնայել, որ ավելի շատ ծախսվի պաստառների վրա: Խնայել ներկայի վրա, որ ապագան գեղեցիկ թվա:

Քաղաքը՝ իր խնդիրներով: Մարդիկ՝ իրենց սպասումներով: Պաստառները՝ իրենց «խաղաղությամբ»: Եվ ամեն տեղ նույն նշանը՝ սրտիկ: Մնում է միայն հասկանալ՝ դա սիրո նշա՞ն է, թե՞ սրտի վերջին բաբախյունները ենք արձանագրում:

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

5 անշափահաս երեխաները եւ հաշմանդամ մայրն օգնության կարիք ունեն

Սեւան քաղաքի հանրակացարաններում բնակվող Հասմիկ Հարությունյանի բազմազավակ ընտանիքը սրտացավ մարդկանց օգնության կարիքն ունի: 35-ամյա Հասմիկը 3-րդ կարգի հաշմանդամություն ունի, դժվարությամբ է քայլում, կարողանում է միայն երեխաներին խնամել, իսկ ամուսինը փորձում է երեխաների համար օրվա հացի գումար վաստակել: Ընտանիքի միակ մշտական եկամուտը «Փարոսի» 60 հազար դրամ օգնությունն է եւ Հասմիկի 36 հազար դրամ հաշմանդամության թոշակը: «Մեկ սենյակի մեջ ենք բնակվում՝ 5 երեխաներիս հետ, վարձով: 60 հազար դրամ նպաստ եմ ստանում, 36 հազար դրամ էլ հաշմանդամությանս թոշակն է: Նպաստից 50 հազար դրամը տան վարձ եմ տալիս, մնացած 10 հազար դրամը՝ հոսանքի գումար մուծում, դա էլ անգամ չի հերիքում: Այս ձմեռ մի կերպ անցկացրինք, մի փոքր էլեկտրական պլիտայով եմ սենյակը տաքացրել: Ամուսինս բանվորություն է անում, օր է լինում՝ կանչում են գործի, օր կա՝ գործ չկա ձեռքին: Ողջ գիշեր մտածում եմ, թե լույսը բացվի, ինչ եփեմ, տանը եղածն այս պահին մի բուռ մակարոն ու բրինձ է: Աշնանը մի քիչ կարտոֆիլ էինք առել, դա էլ վերջացել է: Եղել են դեպքեր, որ դիմել եմ մարզպետարան եւ համայնքապետարան, օգնել են, չեմ կարող ասել, որ անտեսել են, բայց այս պահին շատ, անչափ շատ նեղված եմ, ուղղակի անճարությունից դիմում եմ սրտացավ մարդկանց, որ օգնեն, ինչով կարող են»,- արցունքները սրբելով՝ պատմեց Հասմիկը: 5 երեխաներից 3-ը դպրոց են հաճախում: Սնունդ, հագուստ, խաղալիքներ... ահա թե ինչի մասին են երազում երեխաները: 5-ամյա Արմենի ուզածը, որը նոր-նոր սկսել է խոսել, այնքան էլ մեծ բան չէ՝ քաղցր ու գեղեցիկ տորթ: 6-ամյա Դիանան, որը մանկուց խաղալիք չի ունեցել, խնդրեց. «Տիկնիկով կալլասկա եմ ուզում ու մեկ էլ՝ ինձ սիրուն շորիկ»: «Կոնֆետ, խաղալիք, մեքենա, խաղող»,- իր երազանքը բարձրաձայնեց 7 տարեկան Արմանը:

Թեեւ ապրելու պայմանները շատ վատն են, փողը քիչ է, հազար ու մի չլուծված խնդիրներ կան, սակայն 9-ամյա Անգելինան հույսը չի կորցնում, որ օրերից մի օր իրենց տանն իր սենյակը կունենա:

Այս ընտանիքին օգնել ցանկացողները կարող են զանգահարել՝ 093 67 08 58, Հասմիկ Հարությունյան:

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 19.03.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

«ՆՐԱՆ ՄԵՑ ՀԱՆՁՆԵՔ». ՔՈՉԱՐՅԱՆԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄԸ ՆՈՐ ՀԻՍՏԵՐԻԱ Է ՀԱՐՈՒՅԵԼ ԲԱԲՎՈՒՄ



Մարտի 16-ին հայտնի դարձավ, որ «Հայաստան» դաշինքի վարչապետի թեկնածուն ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանն է: Նա «Հայաստան» դաշինքի թեկնածուն էր նաեւ 2021 թվականի ընտրություններում: Սա, իհարկե, կանխատեսելի սցենար էր՝ անակնկալ չէր: Ներքաղաքական դիսկուրսն արդեն, Քոչարյանի առաջադրման հետ կապված, մի քանի թեզ է հրապարակ նետել. ոմանք պնդում են, որ ՀՀ երկրորդ նախագահի մասնակցությունը հունիսյան խորհրդարանական ընտրություններին ձեռնտու է Նիկոլ Փաշինյանին, որպեսզի նա հերթական անգամ ժողովրդին «ահաբեկի» նախկինների վերադարձով ու դրա, իբր, ծանր հետեւանքներով, արդյունքում վերարտադրման լեգիտիմ պայմաններ ունենալով:

Որոշներն էլ կարծում են, որ, ընդհակառակը, Փաշինյանն է ձեռնտու Քոչարյանին, քանի որ նրա դեմ պայքարելը, այսքան կորուստներից հետո, ուժեղ ու փորձառու ղեկավար Ռ. Քոչարյանի համար, որը ժամանակին պետություն է ղեկավարել, եւ որի ժամանակ Հայաստանն անվտանգ է եղել, ձեռնտու է ՀՀ երկրորդ նախագահին:

Բայց եթե ներհայաստանյան քննարկումներում հարցը դրված է բացառապես ապագա խորհրդարանի «բովանդակության» եւ ըստ այդմ՝ Հայաստանին սպասվող ապագայի հարթության վրա, հարեւան Ադրբեջանում Քոչարյանի առաջադրմանն արձագանքել են կանխատեսելի քինախնդրությամբ ու հիշաչարությամբ՝ այդ «ծխածածկույթի» տակ կրկին ակնարկելով, որ սատարում են Փաշինյանին, եւ Բաքուն շատ է ուզում, որ նա վերարտադրվի: Քոչարյանին հիշատակելիս իշխանամետ քարոզչակայքերը հիշեցնում են նրա առնչությունը ղարաբաղյան պատերազմին, Խոջալուի դեպքերին եւ այլն՝ նրան ներկայացնելով բացասական կերպարում:

«Վարչապետի թեկնածուի (Ռոբերտ Քոչարյան՝ խմբ.) կենսագրության մեջ նման փաստերը, կարծես, քիչ են մտահոգում հայ ռեւանշիստներին, եթե ընդհանրապես մտահոգում են: Եվ «Հայաստան» դաշինքը հենց դա է՝ ռեւանշիստներ: Ավելին, Ռոբերտ Սեդրակովիչն արդեն իսկ խոստանում է իր համաքաղաքացիներին «ավելի լավ խաղաղություն»: Նիկոլ Փաշինյանն արդեն առարկել է եւ բավականին ողջամիտ. «ավելի լավ խաղաղության» հասնելն առանց նոր պատերազմի հնարավոր չի լինի»»,- գրում է ադրբեջանցի իշխանամետ քարոզիչ, քաղաքագետ Նուրանին: Նրա խոսքով, Քոչարյանը երբեք ընտրություններում չի հաղթել որպես ընդդիմության առաջնորդ: «Հայաստանում, Ռոբերտ Քոչարյանի կլանի 10 տարվա եւ Սերժ Սարգսյանի կլանի նույնքան տարվա կառավարման ավարտից հետո շատերը հոգնել են «ղարաբաղյան կլանի» բռնապետությունից եւ, անշուշտ, չէին ցանկանա, որ այն վերադառնար: Բայց Քոչարյանն իսկապես կարող է բավականին վտանգավոր մրցակից լինել Փաշինյանի համար: Եվ, որքան էլ պարադոքսալ հնչի, հնարավոր լուծումը կարող է լինել արմատական սցենարը՝ Քոչարյանին Բաքվին արտահանձնելը, որը նրան միջազգային հետախուզման մեջ է դրել»,- երեւակայության գիրկն ընկնելով՝ նշել է փորձագետը: Բայց գուցե սա նոր մեսիջ-հանձնարարությո՞ւն է Փաշինյանին...

Արա ԱԼՈՅԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am